ՀԱՎԱՏՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ – ԻՆՉԻՆ ԵՆՔ ՄԵՆՔ ՀԱՎԱՏՈՒՄ

Հովանավորված է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից

Նազովրեցու Եկեղեցի

© Copyright 2015. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Նազովրեցու Եկեղեցի (Church of the Nazarene, Inc).

ARMver151018pod

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 6

Վեսլիական սրբության մասին ուսմունքը,
որպես մեր ժառանգություն 7

Մեր համաշխարհային եկեղեցին 12

Մեր հիմնական արժեքները 17

Մեր միսիան.....23

Մեր բնութագիրը.....25

Մեր վեսլիական աստվածաբանությունը ...49

Մեր հավատքի դրույթները.....54

Մեր եկեղեցաբանությունը.....65

Մեր կառավարման ձևը.....70

Եկեղեցի- տեղական, շրջանային
և համաշխարհային.....72

Եկեղեցին փոխկապակցումներով:.....74



ԱՍՏԾՈ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՐ ԵՐԿՐԱՅԻՆ և ԵՐԿՆԱՅԻՆ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ԴՐՍևՈՐՈՒՄՆԵՐՈՎ, ՈՒՆԻ ԻՐ ՀԱՎԱՔՈՒՅԹՆԵՐԸ, ԻՐ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԻԱՅՅԱԼ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՅՑ ԱՅԴ ԱՄԵՆԸ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ՆՐԱ ՀԱՄԱՐ, ՈՐՊԵՍԶԻ ՕԳՆԵՆ ՄԱՐԴՈՒՆ ՓՈԽԱԿԵՐՊՎԵԼՈՒ ԱՍՏԾՈ ՈՐԴՈՒ ՆՄԱՆՈՒԹՅԱՆԸ:

— ՖԻՆԵԱՍ ԲՐԻԶԻ

Նազովրեցու Եկեղեցու Առաջին Գլխավոր Սուպերինտենդենտ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նազովրեցիների նոր սերունդը դիմել է խնդրանքով այն մասին, որ եկեղեցու էությունն ու բնույթը, հավատքի հիմունքները, պատմությունը, աստվածաբանությունը, միսիան, ֆինանսավորումը ներկայացվի կարճ, մատչելի հրատարակությամբ և պարզ լեզվով:

«Նազովրեցու Եկեղեցու հավատքի հիմունքները» - դա կարճ հոդվածների հավաքածու է, որոնք բացատրում են, թե ինչու գոյություն ունի Նազովրեցու եկեղեցին, ով ենք մենք և ինչին ենք մենք հավատում: Այս հրատարակությունը հնարավորություն է տալիս հասկանալու եկեղեցու նպատակը կապված սրբությունը տարածելու գաղափարի հետ, որը ներկայացված է Աստվածաշնչում և նրա միսիան դաստիարակելու Քրիստոսին նման աշակերտներ բոլոր ազգերի մեջ: *«Նազովրեցու Եկեղեցու հավատքի հիմունքները» կարելի է գտնել համացանցում* (www.whdl.org և փնտրել*«Նազովրեցու Եկեղեցու հավատքի հիմունքները»*

Եթե դուք կարդաք և ուսումնասիրեք *« Նազովրեցու Եկեղեցու հավատքի հիմունքները»* , ապա դուք Նազովրեցու Եկեղեցու մասին ավելի շատ տեղեկություն կիմանաք, ինչպես նաև Հիսուս Քրիստոսի Բարի Լուրով կիսվելու նրա ցանկության մասին:

Նշում: : « Նազովրեցու Եկեղեցու հավատքի հիմունքները» ոչ թե փոխարինում են Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցը, այլ լրացնում են:

Ջոն Վեսլի 1703-1791, մեթոդիստական շարժման հիմնադիր:

ՄԵՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Նազովրեցու Եկեղեցին հավատում է, որ նա հանդիսանում է Քրիստոսի Եկեղեցու «միացյալ, սուրբ, տիեզերական և առաքելական» ճյուղերից մեկը: Շնորհիվ այդ հավատքի, քրիստոնեական պատմությունը մենք համարում ենք մեր սեփական պատմությունը: Այսինքն՝ մենք հանդիսանում ենք Աստծո ժողովրդի պատմության մի մասը, որը ամբողջ մարդկության պատմության ընթացքում գրվել է Հին և Նոր Կտակարաններում: Այն ներառում է իր մեջ, Քրիստոսի Եկեղեցու գոյության տարբեր եղանակները, այս աշխարհի տարբեր տեղերում: Մենք ընդունում ենք վաղ քրիստոնեական հավատքի հանգանակությունները, որպես մեր սեփական հավատքի արտահայտություն:

Որպես պատմականորեն ձևավորված եկեղեցի, մենք քարոզում ենք Խոսքը, կատարում ենք եկեղեցական խորհուրդներ և շարունակում ենք այն ծառայությունը, որը սկսել են առաքյալները և որը դաստիարակում է աշակերտների, որոնք ապրում ու նմանվում են Քրիստոսին: Ամբողջ

աշխարհով մեկ և բոլոր ժամանակներում այլ հավատացյալների հետ մենք պատասխանում ենք սրբության կյանքի և Աստծուն կատարյալ նվիրվելու աստվածաշնչյան կոչին: Դա կոչվում է լիակատար սրբագործություն և մենք ուրախ ենք հռչակելու մեր հավատքը այդ ուսմունքին:

Քրիստոնեական պատմության մեջ կան շատ ճյուղավորումներ: Մենք ժառանգել ենք մեր ճանապարհը բողոքական բարենորոգիչներից, ավելի կոնկրետ 16 –րդ դարի անգլիական ռեֆորմացիայից: Այնուհետև մենք կարող ենք հետևել մեր ճանապարհը 18-րդ դարի վեսլիական վերածնունդում: Այդ վերածնունդը սկսվեց երկու եղբայրների ՝ Ջոն և Չարլզ Վեսլիների քարոզներից և այն տարածվեց ամբողջ Անգլիայով, Շոտլանդիայով, Իռլանդիայով և Ուելսով մեկ: Այդ ժամանակ շատ մարդիկ դարձի եկան մեղքից և քրիստոնեական ծառայության համար ուժ ստացան :

Այդ վերածնունդը մարտահրավեր նետեց եկեղեցու ավանդույթային ու գործնական գործողություններին և այն բնութագրվում էր հետևյալ կետերով:

- Եկեղեցու անդամները, որոնք քահանաներ ու սարկավագներ չէին, քարոզում էին:
- Ծառայությունների ժամանակ մարդիկ վկայում էին թե Աստված ինչպես է գործում իրենց կյանքում:
- Հավատացյալներին աջակցում էին, որպեսզի նրանց կյանքում լիներ կարգապահություն, և որպեսզի աշակերտները հավաքվեին փոքր խմբերում, աջակցելու մեկը մյուսին:

Ի հավելում այդ նոր գործողությունների վեսլիական վերածնունդը ուշադրություն էր դարձնում աստվածաբանական կարևոր ճշմարտությունների:

- Արդարացում շնորհքով հավատքի միջոցով:
- Սրբագործումը, որը հայտնի է նաև որպես քրիստոնեական կատարելություն, շնորհքով, հավատքի միջոցով:

Քրիստոնեական պատմության և աստվածաբանության մեջ Ջոն Վեսլիի հատուկ ներդրումը դարձավ կատարյալ սրբության մասին ուսմունքը: Նա հավատում էր, որ այն Աստծո պարգևն է, որը հավատացյալին տալիս է ճշմարիտ քրիստոնեական կյանքով ապրելու ուժ: Նրա ուսմունքը տարածվեց ամբողջ աշխարհով, ներառյալ Ամերիկայում: 1784 թվականին Հյուսիսային Ամերիկայում կազմակերպվեց Մեթոդական Եպիսկոպոսական Եկեղեցի, որի նպատակն էր «փոխել այդ մայրցամաքը և տարածել

սրբության մասին աստվածաշնչյան գաղափարը»:

19-րդ դարում քրիստոնեական սրբության մասին գաղափարը ունեցավ հետագա զարգացում: Տիմոթի Մերրիտը սկսեց հրատարակել «Քրիստոնեական կատարելության ուղեցույց» ամսագիրը: Ֆիբի Պալմերը սրբության մասին ուսմունքը տարածելու համար ամեն շաբաթ կազմակերպում էր պարապմունքներ: Նա դարձավ հայտնի հեղինակ, խմբագրող և քարոզիչ: 1867 թվականին մեթոդիստական քարոզիչ Ջոն Ա. Վուդին և Ս. Ինսկիպը կազմակերպեցին «հանդիպումներ վրաններում»: Դրանք նշանակալից իրադարձություններ էին, որի ժամանակ մարդիկ հավաքվում էին, որպեսզի մի քանի օրեր շարունակ մասնակցեին ծառայություններին (հաճախ նրանք քնում էին վրաններում): Այդ քարոզիչները հիմնականում քարոզում էին սրբության մասին, և նրանք վերածնեցին սրբության համար վեսլիական ձգտումը ամբողջ աշխարհով մեկ:

Առաջացան մի քանի խմբեր, որոնք հատուկ ուշադրություն էին դարձնում սրբության մասին ուսմունքի վրա: Այդ խմբերը կազմված էին Վեսլիական և Ազատ Մեթոդիստներից, Փրկության Բանակի, Եղբայրության, Մենոնիտների և Կվակերներից բաղկացած հավատացյալներից: Ավետարանիչները հասցրեցին այդ շարժումը մինչև Գերմանիա, Անգլիա, Սկանդինավիա, Հնդկաստան և Ավստրալիա: Երբ այդ խմբերը տարածվեցին ամբողջ աշխարհով մեկ կազմավորվեցին նոր եկեղեցիներ, ներառյալ Աստծո Եկեղեցին (Անդերսոն, Ինդիանա): Այդ ժամանկահատվածում քաղաքներում աճում էին միսիաները և միսիոներական ասոցացիաները: Քանի որ չկար միակ միացյալ եկեղեցի, որը պատասխանատու էր այդ աճի համար, մարդիկ սկսեցին անվանել այն «Սրբության Շարժում»: Նազովրեցու Եկեղեցին ծնվեց, երբ ցանկություն առաջացավ միաբանելու այդ սկսնակ խմբերը մեկ հարանվանության մեջ, որը հատուկ ուշադրություն կդարձներ սրբության վրա:

Նրանից, որ մեր արմատները,որպես հարանվանություն, ծագում են «Վեսլիական վերածննդից» և «Սրբության Շարժումից», մենք օգտագործում ենք «սրբության մասին վեսլիական ուսմունք» արտահայտությունը:, որպեսզի բնութագրենք մեզ:

Միաբանությունը Սրբության մեջ

1887 թվականին, Պրովիդենսում, Ռոդ Այլենդ, ԱՄՆ, Ֆրեդ Հիլլերին կազմակերպեց Ավետարանական ժողովրդական եկեղեցին: 1888-ին Լինեում Մասաչուսետսի նահանգ, կազմակերպվեց Միսիայի Եկեղեցին: 1890-ին նրանք և ուրիշ ութ համայնքներ ձևավորեցին Սրբության Կենտրոնական Ավետարանական Ասոցացիան: 1892-ին Աննա Ս. Հանկսը դարձավ եկեղեցու առաջին ձեռնադրված կին ծառայողը, և այդ եկեղեցին հետագայում դարձավ Նազովրեցու Եկեղեցի:

1894 և 1895 –ին ՌԻիլիամ Հովարդը, Բրուքլինում, Նյու- Յորք, միավորեց երեք սրբության համայնքներ, որպես Ամերիկայի Հիսունական Եկեղեցիների Ասոցացիա: Այդ ժամանակ «հիսունական» -ը «սրբության» հոմանիշն էր: 1896 –ին Հիլլերիի և Հուպլաի միաբանվեցին: Նրանք սկսեցին աշխատել Հնդկաստանում (1899) և Կաբո –Վերդեյեում (1901): Քիրամ Ռեյնոլդսը կազմակերպեց համայնք Կանադայում (1902): 1907-ին ասոցացիայում կային եկեղեցիներ Նոր Շոտլանդիայից մինչև Այովա:

1894-ին Ռոբերտ Հարրիսը Միլանում, Թեննեսի, կազմակերպեց Նոր կտակարանային Եկեղեցին: Նրա այրին Մերի Լի Կագլը, շարունակեց նրա աշխատանքը: Ջերինգանը կազմակերպեց առաջին Սրբության Անկախ Եկեղեցին, Վան Ալստինում, Տեխաս: 1904-ին բոլոր այս եկեղեցիները միավորվեցին Ռայզին Ստարում, Տեխասում, և ձևավորեցին Քրիստոսի Սրբության Եկեղեցին: 1908-ին այդ եկեղեցին տարածվել էր Ջորջիայից մինչև Նյու Մեքսիկո, ծառայելով կարիքավորներին ու լքվածներին, օգնելով որբերին և միայնակ կանանցը, ինչպես նաև աջակցելով Հնդկաստանի և Ճապոնիայի ծառայողներին:

1895-ին Ֆիննես Ֆ.Բրիզզին և Ջոզեֆ Ուիդնին, Լոս Անջելոսում, մոտ հարյուր ծառայողների հետ միասին, կազմակերպեցին Նազովրեցու Եկեղեցին: Նրանք հավատում էին, որ քրիստոնյաները, սրբագործված հավատով, պետք է հետևեն Քրիստոսի օրինակին և քարոզեն ավետարանը աղքատներին: Նրանք, Քրիստոսի ծառայության պես, տրամադրում էին իրենց ժամանակը և փողը ծառայության համար, հոգիների փրկության և կարիքավորներին օգնելու համար: Նազովրեցու Եկեղեցին տարածվել էր հիմնականում Ամերիկայի Արևմտյան ափի երկայնքով, բայց Իլինոյիս նահանգի արևելքում նույնպես կային համայնքներ: Նրանք աջակցում էին տեղական միսիաները Կալկատայում, Հնդկաստան:

1907-ի Հոկտեմբերին Հիսունական Եկեղեցիների Ասոցացիայի և Նազովրեցու Եկեղեցու ներկայացուցիչները հանդիպեցին Իլինոյիսի Չիկագո քաղաքում: Նրանք աշխատում էին այն բանի վրա, որպեսզի ստեղծեն նոր եկեղեցի, որը կգտներ հավասարակշռված մոտեցում երկու տարբեր կառավարման ձևերի միջև. Սուպերինտենդենտություն և կոնգրիգացիոն իրավունք: Նոր եկեղեցին պետք է ունենար սուպերինտենդենտներ, որոնք պետք է հոգս տանեին գոյություն ունեցող եկեղեցիների և նոր ստեղծվող եկեղեցիների համար: Բայց այդ սուպերինտենդենտները չպետք է միջամտեին միանգամայն կազմակերպված եկեղեցիների անկախ գործողությունների մեջ: Քրիստոսի Սրբության Եկեղեցու պատգամավորները նույնպես մասնակցում էին այդ հանդիպմանը: Առաջին Գլխավոր Ասամբլեան որոշեց, որ եկեղեցու անունը կազմված կլինի երկու կազմակերպությունների անուններից. Նազովրեցու Հիսունական Եկեղեցի: Բրիզին և Ռեյնոլդսը ընտրվեցին առաջին սուպերինտենդենտներ:

1908-ի Սեպտեմբերին եկեղեցին առաջնորդվելով Տրումբաուերի կողմից միավորվեց Նազովրեցու Հիսունական Եկեղեցուն: Հետո Հոկտեմբերի 13-ին հավաքվեց երկրորդ Գլխավոր Ասամբլեան, Տեխասի նահանգ Փայլոտ Պոինտում Քրիստոսի Սրբության Եկեղեցու Գլխավոր խորհրդի հետ: Այդ հանդիպման արդյունքում երկու եկեղեցիները միավորվեցին:

1898-ին, ՄակԿլուրկանը գլխավորում էր Նեշվիլում, Թենեսսի նահանգ, ձևավորված, Հիսունական Միսիան: Այդ խումբը ամբողջ տարածաշրջանում միավորում էր սրբության մարդկանց: Նրանք ուղարկում էին հովիվներ և ուսուցիչներ Կուբա, Գվատեմալա, Մեքսիկա և Հնդկաստան: 1906-ին Գլազգոյում, Շոտլանդիա, Ջորջ Շարպը դուրս վռնդվեց իր եկեղեցուց, որովհետև նա քարոզում էր քրիստոնեական սրբության մասին վեսլիական վարդապետությունը: Նա հիմնադրեց նոր համայնքներ, և վերջիվերջո 1909-ի հաստատվեց Շոտլանդիայի Հիսունական Եկեղեցին: 1915-ին Հիսունական Միսիան և Շոտլանդիայի Հիսունական Եկեղեցին միավորվեցին Նազովրեցու Հիսունական Եկեղեցու հետ:

1919-ի հինգերորդ Գլխավոր Ասամբլեան փոխեց հարանվանություն անունը, որպես Նազովրեցու Եկեղեցի: «Հիսունական» բառը այլևս չէր արտահայտում «սրբության մասին ուսմունք», որը եղել էր 19-րդ դարում: Երիտասարդ հարանվանությունը հավատարիմ մնաց իր նախնական ավետարանի քարոզի միսիային, լիակատար փրկության մասին:

ՄԵՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ Է:

Մեր եկեղեցու միջազգային էությունը ձևավորվեց այն եկեղեցիներով, որոնք միաբանվեցին 1915 թվականին: Այդ ժամանակ Նազովրեցու Եկեղեցին գոյություն ուներ Արգենտինայում, Մեծ Բրիտանիայում, Գվատեմալայում, Հնդկաստանում, Կանադայում, Կաբո - Վերդիյում, Չինաստանում, Կուբայում, Մեքսիկայում, Պերույում, Սվիզելանդում, Ճապոնիայում և ԱՄՆ-ում: 1930 թվականին այս եկեղեցին հայտնվեց նաև Բարբադոսում, Մոզամբիկում, Պաղեստինում, Սիրիայում, Տրինիդատում, և Հարավային Աֆրկայում: Ազգային առաջնորդները այդ պրոցեսում կարևոր մաս էին կազմում, ներառյալ սուպերինտենդենտներ՝ Վ.Գ.Սատին (Մեքսիկա), Հիրոշի Կիտագավա (Ճապոնիա), Սամուիլ Բույբալ (Հնդկաստան):

Եկեղեցու միջազգային բնավորությունը զարգանում էր այնքանով, թե որքան ուրիշ խմբեր էին միանում այդ հարանվանությանը:

1922 թվականին Դ.Գ. Մորրիսոնը, շատ ծառայողներ բերեց Ծխականների Սրբության Ասոցացիայից և մոտ 1000 անդամներ միաբանվեցին այդ եկեղեցուն, Դակոտայում, Մինիստեյում և Մոնտանայում: 1930-ական թվերին Չանգ Նամ Սուն (Ռոբերտ Չանգ), Նազովրեցու Եկեղեցի բերեց մի

քանի կորեական հովիվների: 1945-ին Ավստրալիայում եկեղեցիները Ա.Ա.Ե. Բերգի ղեկավարությամբ, միաբանվեցին Նազովրեցու Եկեղեցուն: Ալֆրեդո Դել Ռոսսոն իտալական եկեղեցիներին բերեց Նազովրեցու Եկեղեցի 1948-ին: Հարավային Աֆրիկայում «Խեֆցիբա» Հավատքի ասոցացիան, և նրա կենտրոնական գրասենյակը, որը գտնվում էր Այովա նահանգի Թաբոր քաղաքում, նազովրեցիներին միացան 1950 թվականին:

Սրբության միջազգային Միսիան, որը հիմնադրվել էր Լոնդոնում 1907 թվականին, Դավիդ Թոմասի կողմից, սկսեց ակտիվորեն աշխատել Աֆրիկայի հարավում, Դավիդ Ջոնսոնի ղեկավարությամբ: 1952-ին Անգլիայի և Աֆրիկայի եկեղեցիները Դ.Բ.Մակլիգանի գլխավորությամբ, միացան նազովրեցիներին: 1934-ին Մեյնարդ Ջեյմսը և Ջեկ Ֆորդը, Անգլիայում, հիմնադրեցին Գողգոթայի Սրբության Եկեղեցին, և միացան նազովրեցիներին 1955-ին: 1918-ին Ֆրենկ Գոֆֆի կողմից հիմնադրված Ավետարանի Ծառայողների Եկեղեցին, միավորվեց Նազովրեցու Եկեղեցուն 1958-ին: Նիգերիացիները 1940-ին Ջերիմի Իկեյդամայի գլխավորությամբ կազմակերպեցին տեղական Նազովրեցու Եկեղեցի և միաբանվեցին միջազգային եկեղեցուն 1988-ին:

Այնքանով, որքան որ Նազովրեցու Եկեղեցին աճում էր, այնքան նրա ինքնագիտակցության մեջ ամրապնդվում էր, որ նա միջազգային հարանվանություն է: Այդ զարգացման լույսի ներքո նազովրեցիները գիտակցաբար զարգացնում էին եկեղեցու այն մոդելը, որը տարբերում էր նրանց մյուս բողոքական եկեղեցիներից: 1976-ին հանձնաժողովը վերլուծեց հարանրավության ապագան: 1980-ի Գլխավոր Ասամբլեայի ժամանակ, իր հաշվետվության մեջ նա խորհուրդ տվեց հարանվանությանը գիտակցաբար ընդունել ինտեգրացիոն գործընթացը, հիմնվելով երկու սկզբունքի վրա:

- Առաջին- ճանաչել, որ Նազովրեցու Եկեղեցիները և տարածաշրջանները ստեղծվում են ամբողջ աշխարհով մեկ «հավատացյալների միջազգային հաղորդակցություն, որտեղ կա հավատացյալների լրիվ ընդունում իրենց ներքին մշակութային կոնտեքստի մեջ»:
- Երկրորդ- սահմանված է, որ կա ընդհանուր նվիրվածություն «Նազովրեցու Եկեղեցու հատուկ միսիային», այսինքն՝ «տարածելու աստվածաշնչյան գաղափարը … որպես հավատքի հիմքերի գլխավոր էլեմենտ, որոնք չեն քննարկվում, որոնք պարզաբանում են թե ինչ է իրենից ներկայացնում Նազովրեցու Եկեղեցին»:

1980 թվականի Գլխավոր Ասամբլեան ընդունեց «միջազգային աստվածաբանական միաբանության» համաձայն Հավատքի Դրույթները: Նա հաստատեց կրթության կարևորությունը բոլոր ծառայողների համար, և նա կոչ արեց այն բանին, որ կատարվի համապատասխան աջակցություն, ամբողջ աշխարհի կրթական հաստատություններին: Ասամբլեան նազովրեցիներին, որպես միջազգային հարանվանություն, հասունության կոչ արեց, հատուկ ուշադրություն դարձնելով սրբությանը: Այդ համայնքը փոխկապակցված էր այնպես, որ մարտահրավեր էր նետում հին գաղութային մտածելակերպին, որը բաժանում էր մարդկանց և ազգերին երկու խմբերի. «ուժեղներ և թույլեր, դոնորների և ստացողների»: Այդ մոդելը իր տեղը զիջեց նրան, «որը ընդունում է բացարձակապես նոր հայացք աշխարհին, ընդունելով բոլոր մասնակիցների հավասարությունը և ուժեղ կողմերը»:[1]

Դրանից հետո, բողոքականների մեջ, Նազովրեցու Եկեղեցու մոտ հայտնվեց աճի եզակի մոդել: Արդեն 1998-ին նազովրեցիների կեսը չէր ապրում ԱՄՆ-ում և Կանադայում: 2001 թվականի Գլխավոր Ասամբլեայի ժամանակ երեք պատգամավորներից երկուսը անգլերենն օգտագործում էր որպես երկրորդ լեզու, կամ չէր խոսում: 2009-ին Աֆրիկայի բնակիչ Եվգենիյո Դուարտը Կաբո- Վերդեյից ընտրվեց գլխավոր սուպերինտենդենտ:

Միջազգային ծառայության տարբերվող բնութագրերը

Պատմականորեն այնպես է դասվորվել, որ նազովրեցիների մոտ միշտ ցանկություն է եղել նվիրել իրենց ավետարանչությանը, սոցիալական ծառայությանը և կրթությանը: Այդ ծառայությունը ծաղկել է ի շնորհիվ միսիոներների, հազարավոր հովիվների, ծառայողների և եկեղեցու անդամների միացյալ ջանքերի: Այս աշխատավորները օգտագործեցին Վեսլիական սկզբունքները իրենց մշակույթների մեջ և դարձրեցին իրենց սեփականը:

Քիրամ Ռեյնոլդսը առաջնորդ էր, որը մասնակցել էր համաշխարհային ավետարանչությունը ներկայացնելուն, այսինքն՝ նազովրեցիները աշխատում են տարբեր մշակույթներում, Ավետարանը տարածելու համար: 25 տարիների ընթացքում երբ նա գլխավոր սուպերինտենդենտ էր, նա

[1] Նազովրեցու Եկեղեցու Քսաներրորդ Գլխավոր Ասամբլեայի գրառումներից,, (1980): 232. Franklin Cook, *The International Dimension* (1984): 49.

մշտապես ներկայացնում էր միսիաները և նա օգնեց, որ միսիոներության համար աջակցությունը հարանվանությունում լիներ առաջնային հարց: Սկսած 1915-ից Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիան, կազմակերպություն է, որը կրթում և աջակցում է ֆինանսներով, և քարոզում է նազովրեցիների միսիաների աշխատանքը, ակտիվորեն աշխատել է ամբողջ աշխարհով:

Հենց սկզբից նազովրեցիները եղել են այն մարդիկ, ովքեր ցույց են տվել գթասրտություն: Նրանք վկայել են Աստծո գթածության մասին, աջակցելով մարդկանց սոված Հնդկաստանում, կազմակերպելով մանկատներ, և կացարաններ միայնակ կանանց համար, ովքեր ունեին երեխաներ, ստեղծելով քաղաքային միսիաներ, որոնք ծառայում էին անտուններին ու կախվածություն ունեցող մարդկանց: 1920 ականներին եկեղեցու սոցիալական ծառայությունների առաջնահերթությունը տեղափոխվեց դեպի բժշկություն: Նազովրեցու Եկեղեցին հիվանդանոցներ կառուցեց Չինաստանում, Սվիզելանդում, ավելի ուշ Հնդկաստանում և Պապուա Նոր Գվինեայում: Արհեստավարժ նազովրեցի բուժաշխատողները հոգ էին տանում հիվանդների համար, կատարում էին վիրահատություններ, կրթում էին բժշկական անձնակազմը, և աջակցում էին ամբուլատորիաների առաջընթացը աշխարհի ամենաաղքատ ազգերի մեջ: Եկեղեցին ստեղծել է մի քանի հատուկ կլինիկաներ, այնպիսին, ինչպես լեպրազորիաները Աֆրիկայում:

1980 թվականին եկեղեցին ստեղծեց Նազովրեցու Գթասրտության Ծառայությունը: Այն թույլ տվեց մասնակցելու բազմապիսի սոցիալական ծառայությունների մեջ, որոնք շարունակվում են մինչև այսօր, աջակցելով երեխաներին, օգնություններ տարերային աղետների ժամանակ, կրթական ծրագրեր ՄԻԱ-յով վարակված մարդկանց համար, աջակցություն որբերին, խմելու ջրի արտահանում, սննդամթերքի համալիր ապահովում և զանազան այլ բաներ:

Կիրակնօրյա դպրոցը և Աստվածաշնչյան դասընթացները եղել են նազովրեցիների համայնքների կյանքի մի մասնիկը: Նրանք կարևոր դեր են կատարում Քրիստոսին նման աշակերտների կայացման գործընթացում: Իր գոյության առաջին տարիներից սկսած, Եկեղեցին միջոցներ է ներդրել կրթության մեջ, ինչպես նաև անգրագիտությունը հաղթահարելու համար: Վաղ օրինակներից մեկն է Կալկաթայի իգական Հույսի Դպրոցը, որը հիմնվել է 1905 թվականին: Նազովրեցու դպրոցները աշակերտներ են

պատրաստել ամբողջ աշխարհով, որպեսզի լիարժեք կարողանան մասնակցել կյանքի բոլոր ասպեկտներում, սոցիալական, տնտեսական, ինչպես նաև կրոնական: ԱՄՆ-ում նազովրեցու համալսարանների մեծամասնությունը ունեին իրենց միջնակարգ դպրոցները, որոց նրանք աջակցում էին մինչև քսաներորդ դարի կեսերը:

Նազովրեցու Եկեղեցու հիմնադիրները շատ ներդրումներ են կատարել կրթության մեջ: Նրանք հավատում էին, որ հովիվների և քրիստոնեական ծառայողների կրթությունը շատ կարևոր է: Կրթությունը նաև շատ կարևոր է անդամների ձևավորման գործում: Կրթության Միջազգային Խորհուրդը կազմել է Նազովրեցու Եկեղեցու բարձրագույն ուսումնական հաստատությունների ցուցակը ներառյալ քոլեջները, որոնք կապված են արվեստի հետ, համալսարանները Աֆրիկայում, Բրազիլիայում, կանադայում, Կարիբյան կղզիներում, Կորեայում և ԱՄՆ-ում: Հնդկաստանում և Պապուա Նոր Գվինեայում կան բուժքույրերի պատրաստման դպրոցներ: Ի հավելումն այս ամենի եկեղեցին ունի աստվածաշնչյան քոլեջներ և ինստիտուտներ աշխարհի վեց տարածաշրջաններում (Աֆրիկա, Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, Եվրազիա, Միջերկրածովյան տարածաշրջան, Միջինամերիկյան տարածաշրջան, Հարավամերիկյան տարածաշրջան, ԱՄՆ և Կանադա), ինչպես նաև աստվածաբանական դպրոցներ Ավստրալիայում, Կոստա – Ռիկայում, Անգլիայում, Ֆիլիպիններում, և ԱՄՆ-ում:

Նազովրեցու Եկեղեցին ժամանակի ընթացքում աճեց եկեղեցու և ներկայացչությունների հետ ցրված ամբողջ աշխարհով մեկ, և այժմ դարձել է հավատացյալների միջազգային համայնք: Հիմնվելով վեսլիական ավանդույթների վրա, եկեղեցին նկարագրում է իր մարդկանց, որպես «միսիային նվիրված սուրբ քրիստոնյաների» (տես «Հիմնական արժեքները»): Նազովրեցիները ընդունում են եկեղեցու միսիայի մասին այս հաստատումը, - «Դաստիարակել Քրիստոսի նման աշակերտներ բոլոր ազգերի մեջ»:

ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

1. Մենք – Քրիստոսի ժողովուրդն ենք:

Որպես Տիեզերական Եկեղեցու անդամներ, մենք միանում ենք բոլոր ճշմարիտ հավատացյալներին և հռչակում ենք Հիսուս Քրիստոսի Գերիշխանությունը, ինչպես նաև ընդունում ենք քրիստոնեական եկեղեցու պատմական հավատամքները և Երրորդության մասին Հավատքի դրույթները: Մենք գնահատում ենք մեր ժառանգությունը՝ սրբության մասին Վեսլիական ուսմունքը և հավատում ենք, որ այս կերպ պետք է հասկանալ հավատքը, որը հանդիսանում է ճշմարտություն համապատասխան Սուրբ Գրքի, բանականության, ավանդության և փորձի:

ԲՈԼՈՐ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱԲԱՆ ՄԵՆՔ ՀՌՉԱԿՈՒՄ ԵՆՔ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Բոլոր հավատացյալների հետ միաբան, մենք հռչակում ենք Հիսուս Քրիստոսի Գերիշխանությունը: Մենք հավատում ենք, որ աստվածային սիրով, Աստված բոլոր մարդկանց առաջարկում է մեղքերի ներում և Իր հետ հարաբերությունների վերականգնում: Լինելով Աստծո հետ հաշտված, մենք հավատում ենք, որ մենք պետք է նաև հաշտված լինենք մեկս մյուսի հետ, սիրելով մեկս մյուսին, ինչպես Աստված սիրեց մեզ, ներելով մեկս մյուսին, ինչպես Աստված մեզ ներեց: Մենք հավատում ենք, որ մեկս մյուսի հետ շփվելիս, մեր կյանքը պետք է Քրիստոսի բնավորության օրինակ լինի: Մենք համարում ենք, որ Սուրբ Գիրքը հանդիսանում է հոգևոր ճշմարտության գլխավոր աղբյուր, որը հաստատված է բանականությամբ, ավանդությամբ և փորձով:

Հիսուս Քրիստոսը Եկեղեցու Տերն է, որը ինչպես հռչակում է Նիկեան հավատքի հանգանակը համարվում է միասնական, սուրբ, տիեզերական և առաքելական: Հիսուս Քրիստոսով և Սուրբ Հոգու միջնորդությամբ, Հայր Աստվածը առաջարկում է մեղքերի թողություն և հաշտեցում ամբողջ աշխարհի համար: Նրանք, որոնք հավատքով պատասխանում են Աստծո կանչին, դառնում են Աստծո ժողովուրդ: Լինելով ներված ու հաշտված Քրիստոսում, մենք ներում ենք ուրիշներին և հաշտվում ենք մեկս մյուսիս հետ: Այսպիսով, մենք դառնում ենք Եկեղեցի և Հիսուսի Մարմինը, և ցույց ենք տալիս Քրիստոսի մարմնի միասնությունը: Որպես Քրիստոսի միասնական Մարմին, մենք ունենք «մեկ Տեր, մեկ հավատք, մեկ մկրտություն» Մենք հաստատում ենք Քրիստոսի Եկեղեցու միասնականությունը և ձգտում ենք ամեն ինչում պահպանել այն: (Եփ 4:5,3)

2.Մենք – Սրբության ժողովուրդ ենք

Աստված՝ Ով սուրբ է, կոչ է անում մեզ սրբության կյանքի: Մենք հավատում ենք, որ Սուրբ Հոգին ձգտում է մեր մեջ կատարել շնորհքի երկրորդ գործողությունը, որը անվանում են տարբեր խոսքերով ներառյալ այնպիսի տերմիններ,

ԴԱ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ Է, ՈՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է ՄԵՐ ՄԵՋ ԱՍՏԾՈ ԿԵՐՊԱՐԸ, և ՁևԱՎՈՐՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ:

ինչպես «լիակատար սրբագործություն» կամ «Սուրբ Հոգու մկրտություն»: Աստծո այդ գործողությունները, որոնք մեզ մաքրում են ամեն տեսակ մեղքերից, վերականգնում է մեր մեջ Աստծո կերպարը, տալիս է Աստծուն սիրելու կարողություն, ամբողջ սրտով, հոգով և զորությունով, և մերձավորին քո անձի պես, ինչպես նաև մեր մեջ ձևավորում է Քրիստոսի բնավորությունը: Հավատացյալի կյանքի մեջ սրբությունը ավելի լիարժեք հասկացվում է, որպես նմանվել Քրիստոսին:

Քանի-որ ըստ Սուրբ Գրքի մենք կանչված ենք և շնորհքով առաջնորդված փառաբանելու Աստծուն և Նրան սիրելու ամբողջ սրտով, հոգով և զորությունով, և մերձավորին մեր անձի պես, մենք ամբողջությամբ նվիրաբերում ենք մեզ Աստծուն, հավատալով, որ մենք կարող ենք լինել «կատարյալ սրբագործված», ընդունելով շնորհքի երկրորդ գործողությունը մեզ վրա: Մենք հավատում ենք, որ Սուրբ Հոգին մերկացնում է մեղքը, մաքրագործում է, լցնում է մեզ և ուժ է տալիս այն ժամանակ, երբ Աստծո շնորհքը օրըստօրե ձևափոխում է մեզ, որպես սիրո և հոգևոր կարգապահության, էթիկական ու բարոյական մաքրության, արդարության ու գթասրտության ժողովրդի: Սուրբ Հոգու այդ գործողությունները վերականգնում է մեր մեջ Աստծո կերպարը և ձևավորում է Քրիստոսի բնավորությունը:

Մենք հավատում ենք Հայր Աստծուն, Արարչին, որը արթնացնում է լինելու այն, ինչը գոյություն չուներ: Մենք չկայինք, սակայն Աստված մեզ կյանքի կոչեց, ստեղծեց մեզ Իր համար, և ստեղծեց մեզ Իր պատկերով և նմանությամբ: Մեզ հանձնարարված է արտացոլել Աստծո կերպարը մեր մեջ. «Ես եմ ձեր Տեր Աստվածը, Ուրեմն սուրբ եղեք, ըստ որում Ես սուրբ եմ» (Ղևտ. 11:44):

3. Մենք – Միսիայի ժողովուրդ ենք:

Մենք – ուղարկված ժողովուրդ ենք, Քրիստոսի կանչին պատասխանած և Սուրբ Հոգու ուժով օժտված, գնալու բոլոր ազգերին, վկայելու Քրիստոսի Գերիշխանության մասին, մասնակցելու Աստծո հետ Եկեղեցու կառուցման գործին, և ընդլայնելու Իր թագավորությունը (Մատթ. 28:19-20; 2Կոր. 6:1): Մեր միսիան (ա) սկիզբ է առնում երկրպագությունից, (բ) ծառայում է աշխարհին ավետարանչության և գթասրտության միջոցով, (գ) հավատացյալներին ոգևորում է իրենց քրիստոնեական հասունության ճանապարհին, աշակերտության

միջոցով, և (դ) տղամարդկանց և կանանց պատրաստում է քրիստոնեական ծառայության, բարձրագույն քրիստոնեական կրթության միջոցով:

Ա. Մեր երկրպագության միսիան

Աշխարհում եկեղեցու միսիան սկսվում է երկրպագությունից: Երբ մենք հավաքվում ենք Աստծո առջև երկրպագության համար – երգում ենք, լսում ենք ընթերցանություն Աստվածաշնչից, նվիրաբերում ենք տասանորդը և զոհաբերությունը Աստծուն, աղոթում ենք, լսում ենք քարոզ, մասնակցում ենք հաղորդության և մկրտության խորհուրդներին և այսպիսով, մենք ավելի պարզ ենք հասկանում, թե ինչ է նշանակում լինել Աստծո ժողովուրդ: Մեր հավատամքը այն բանին, որ Աստծո աշխատանքը աշխարհում կատարվում է հավատացյալների համայնքի միջոցով, առաջնորդում է մեզ այն բանի հասկացողությանը, որ միսիան ներառում է նոր անդամների միացումը եկեղեցու համայնքին, ինչպես նաև Աստծուն երկրպագող նոր համայնքների կազմակերպումը:

Երկրպագությունը հանդիսանում է մեր սիրո ամենամեծ դրսևորումը դեպի Աստված: Դա ամբողջովին ուղղված է դեպի Աստված, փառաբանություն և երկրպագություն մեզ Փրկագնողին Իր շնորհքով և ողորմությամբ: Հաճախ փառաբանությունը տեղի է ունենում տեղական եկեղեցու շրջանակներում, որտեղ հավաքվում են Աստծո ժողովուրդը, ոչ թե ինքնազմայլման ու ինքնափառաբանման համար, այլ նվիրաբերում ենք մեզ Աստծուն լիակատար նվիրվածությամբ: Երկրպագությունը՝ դա եկեղեցու ծառայությունն է սիրով և հնազանդվելով Աստծուն:

ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆԸ – ԴԱ ՄԵՐ ՍԻՐՈ ԱՄԵՆԱՄԵԾ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆ Է ԴԵՊԻ ԱՍՏՎԱԾ:

Բ. Մեր գթասրտության և ավետարանչության միսիան

Որպես Աստծուն նվիրված ժողովուրդ, մենք կիսում ենք Նրա սերը մեղավորների և գթասրտությունը աղքատ և դժբախտ մարդկանց նկատմամբ: Մեծ պատվիրանը (Մատթ. 22: 36-40), և Մեծ

հանձնարարությունը (Մատթ. 28:19-20) մղում են մեզ գործել ամբողջ աշխարհում ավետարանչության, գթասրտության և արդարության վերականգնման միջոցով: Հենց այդ պատճառով մենք մարդկանց կոչ ենք անում հավատքի, հոգս ենք տանում կարիքավորներին, հակառակվում ենք անարդարությանը, պաշտպանում ենք ճնշվածներին, ձգտում ենք պահպանել Աստծո ստեղծագործությունը, ինչպես նաև ընդունում ենք մեր հաղորդակցության մեջ բոլորին, ովքեր կանչում են Տիրոջ Անունը:

Աշխարհում կատարելով մեր միսիան, եկեղեցին ցուցաբերում է Աստծո սերը: Աստվածաշնչի պատմությունը՝ դա Աստծո պատմությունն է, որը հաշտեցրել է աշխարհը Իր հետ, Իր Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով (2 Կոր. 5:16-21): Եկեղեցին ուղարկված է աշխարհ, որպեսզի Աստծո հետ մասնակցի այդ սիրո ծառայությունում և հաշտեցմանը ավետարանչության, գթասրտության, արդարության վերականգման միջոցով:

ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱ ՄԻՋՈՑ Է, ՈՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԲԵՐՈՒՄ Է ՄԵԶ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՍՈՒՄ:

Գ. Մեր աշակերտության միսիան

Մենք նվիրաբերել ենք մեզ այն բանին, որպեսզի դառնանք Հիսուս Քրիստոսի աշակերտները, և կոչ ենք անում ուրիշ մարդկանց էլ դառնալ Նրա աշակերտները: Այդ նպատակին հասնելու համար, մենք ձգտում ենք հավատացյալներին ներկայացնել տարբեր միջոցներ (Աստվածաշնչյան դասեր, Կիրակնօրյա դպրոց, փոքր խմբեր և այլն), որոնք կօգնեն նրանց աճել քրիստոնեական հավատքը հասկանալու մեջ, ինչպես նաև իրենց փոխհարաբերությունների մեջ մեկը մյուսի և Աստծո հետ: Մենք համարում ենք, որ աշակերտությունը պետք է ներառի հնազանդություն Աստծուն և հավատքի հոգևոր կարգապահության պահպանում: Մենք հավատում ենք, որ սուրբ կյանքով ապրելու համար պետք է օգնենք մեկս մյուսիս, փոխադարձ աջակցության, քրիստոնեական հաղորդակցության և սիրո մթնոլորտում փոխադարձ պատասխանատվության միջոցով: Վեսլին ասում էր, որ - «Աստված մեզ նվեր է տվել օգնելու մեկս մյուսին»:

Քրիստոնեական աշակերտությունը՝ դա կայնքի ապրելակերպ է: Դա կրթության ընթացք է, թե այս աշխարհում Աստված ինչպես է ուզում, որ մենք ապրենք: Կախված այն բանից, թե ինչպես ենք սովորում ապրել Աստծո Խոսքին հնազանդության մեջ և պահելով հավատքի հոգևոր կարգապահությունները, պատասխանատվություն կրելով մեկս մյուսիս դեմ, մենք սկսում ենք գիտակցել հոգևոր կարգապահության մեջ կյանքի իսկական ուրախությունը, ինչպես նաև ազատության մասին քրիստոնեական հասկացողությունը: Աշակերտությունը՝ դա ոչ միայն մարդկային ջանքեր են հնազանդվելու կարգ ու կանոնին, այլ դա միջոց է, որով Սուրբ Հոգին աստիճանաբար բերում է մեզ դեպի Քրիստոսի մեջ հասունության: Աշակերտության շնորհիվ մենք դառնում ենք Քրիստոսի բնավորությամբ ժողովուրդ: Աշակերտության գլխավոր նպատակն է – նմանվել Հիսուս Քրիստոսին (2 Կոր, 3:18):

Դ . Մեր քրիստոնեական բարձրագույն կրթության միսիան

Մենք նվիրաբերել ենք մեզ քրիստոնեական կրթությանը, որը պատրաստում է տղամարդկանց և կանանց քրիստոնեական ծառայության կյանքին: Մեր սեմինարիաներում, աստվածաշնչյան քոլեջներում, քոլեջներում և համալսարաններում, մենք ձգտում ենք ձեռք բերել գիտելիքներ, ինչպես նաև զարգացնում ենք քրիստոնեական բնավորություն և պատրաստում ենք առաջնորդներ, որպեսզի կարողանանք կատարել Աստծուց մեզ տրված ծառայության կանչը եկեղեցում և աշխարհում:

Քրիստոնեական բարձրագույն կրթությունը Նազովրեցու Եկեղեցու Միսիայի համար կենտրոնական մասն է: Նազովրեցու Եկեղեցու գոյության վաղ տարիներից, քրիստոնեական ուսումնական հաստատությունները կազմակերպված էին պատրաստելու տղամարդկանց և կանանց առաջնորդության և սրբության ու վերածննդի մասին Վեսլիական ուսմունքի համաշխարհային տարածման քրիստոնեական ծառայության համար: Մեր նվիրաբերությունը քրիստոնեական բարձրագույն կրթությանը, տարիների ընթացքում բերել է ստեղծելու մի ամբողջ շարք սեմինարիաներ, աստվածաշնչյան դպրոցներ, քոլեջներ և համալսարաններ, աշխարհի տարբեր երկրներում:

ՄԵՐ ՄԻՍԻԱՆ

ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՍԻԱՆ – ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ ՆՄԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԲՈԼՈՐ ԱԶԳԵՐԻՑ :

Որպես հավատքի համաշխարհային հանրություն, մենք նվիրված ենք նրան, որպեսզի կատարենք Հիսուսի կողմից տրված Մեծ Հանձնարարությունը (Մատթ. 28: 19-20): Այսինքն՝ մենք ձգտում ենք հասցնել Քրիստոսում նոր կյանքի Բարի լուրը ամբողջ աշխարհի մարդկանց: Մենք տարածում ենք սրբության մասին աստվածաշնչյան ուսմունքը և Քրիստոսի կյանքի նմանվող ապրելակերպը, ամբողջ աշխարհում:

Նազովրեցու Եկեղեցին միաբանում է բոլոր մարդկանց, որոնք ընդունել են Հիսուս Քրիստոսին, որպես իրենց կյանքի Տերը: Մենք հավաքվում ենք միասին քրիստոնեական երկրպագության համար և մենք ցանկանում ենք երկրպագության ժամանակ աջակցել մեկս մյուսին հավատքով, քարոզով, կրթությունով և ծառայությունով:

Նվիրելով մեզ Քրիստոսի կյանքի նման կյանք ունենալուն, մենք ձգտում ենք ցուցադրել Հիսուս Քրիստոսի գթասրտությունը բոլոր մարդկանց:

Եկեղեցու գլխավոր նպատակն Աստծուն փառաբանելն է, բայց մենք նաև կանչված ենք ակտիվորեն մասնակցելու Նրա Միսիային – հաշտեցնել աշխարհը Աստծո հետ:

Դա իր մեջ ներառում է մեր միսիայի պատմականորեն ձևավորված սկզբունքներ ավետարանչության, սրբագործման, աշակերտության և գթասրտության մասին: Մենք համատեղում ենք բոլոր այս հասկացողությունները մեկ արտահայտության մեջ. «լինել Քրիստոսին նման դա սրբություն է»:

Նազովրեցիները դառնում են «ուղարկված մարդիկ» - ուղարկված տներ, աշխատանքի վայրեր, համայնքներ, տարբեր քաղաքներ և երկրներ: Այժմ միսիոներներին ուղարկում են աշխարհի բոլոր շրջաններից: Աստված ցանկանում է կանչել սովորական մարդկանց անելու անսովոր բաներ, ի շնորհիվ Սուրբ Հոգու մասնակցության:

ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

2013 թվականի Գլխավոր Ասամբլեայի ժամանակ, Գլխավոր սուպերինտենդենտների Խորհուրդը անվանեց Նազովրեցու Եկեղեցու յոթը բնութագրեր.

1. Գիտակցված երկրպագություն
2. Համաձայնեցված աստվածաբանություն
3. Ավետարանչության ցանկություն
4. Նպատակասլաց աշակերտություն
5. Զարգացող եկեղեցի
6. Փոխակերպող առաջնորդություն
7. Նպատակասլաց գթասրտություն

Այս նկարագիրը չի փոխարինում մեր միսիան, որն է “ Դաստիարակել Քրիստոսի նման աշակերտներ բոլոր ազգերից”, կամ մեր հիմնական արժեքները “ Քրիստոնեություն, սրբություն, միսիա”: Միասին այս բնութագրերը նկարագրում են թե ինչին ենք մենք հավատում, և այն պետք է բնութագրի Նազովրեցու ամեն մի Եկեղեցի, կամ մեծամասամբ պետք է արտահայտվի ամբողջ աշխարհի նազովրեցիների մեջ: Մենք խնդրում ենք եկեղեցու բոլոր առաջնորդներին հատուկ ուշադրություն դարձնել (իսկ բոլոր նազովրեցիներին ընդունել) այս բնութագրերին, երբ մենք շարժվում

ենք առաջ: Արեք տեսնենք, տեսնենք թե այն ինչպե՞ս կարող է իրականություն դառնալ համաշխարհային եկեղեցու համար:

1. Գիտակցված երկրպագություն

Մենք վստահությամբ կարող ենք ասել, որ երկրպագել Աստծուն նշանակում է ընդունել Նրան, որպես մեր փրկության Վեմ, մեծ Աստված, մեծ թագավոր ամենաբարձրը բոլոր աստվածներից, ամեն ինչի Արարիչը, Հովիվ, որը հոգս է տանում իր ժողովրդի համար:

Ա. Հիսուսի աշակերտները ապրում էին Նրա ներկայությունում, և ծառայում էին ուրիշներին ի շնորհիվ այդ փոխհարաբերությունների:

- Հիսուսն ուղարկում էր Իր աշակերտներին ծառայելու (Մատթ. 10):
- Ավելի ուշ Նա նրանց ասել էր, որ նրանց անհրաժեշտ էր լցվել Սուրբ Հոգով: Նրանք սպասում էին վերնատանը, և նրանց վրա իջավ Սուրբ Հոգին, ինչպես որ Հիսուսը խոստացել էր (Գործք 2):
- Հենց որ աշակերտները սկսեցին իրենց ծառայությունը աշխարհի

Երկրպագության կոչ

Եկեք ցնծանք Տերովը, աղաղակենք դեպի մեր փրկության Վեմը,

Թող գոհություն տալով գանք Նրա երեսի առաջը, սաղմոսներով աղաղակենք դեպի Նա,

Որովհետև Տերը մեծ Աստված և մեծ Թագավոր է ամեն աստվածների վրա:

Որ Նրա ձեռքին են երկրի խորքերը, և սարերի բարձրությունները Նրանն են:

Որ Նրանն է ծովը, և Նա արավ նրան և Նրա ձեքերն ստեղծեցին ցամաքը:

Եկեք երկրպագություն անենք և երեսի վրա , ծունր դնենք մեզ ստեղծող Տիրոջ առաջին:

Որովհետև Նա է մեր Աստվածը և մենք Նրա արոտի ժողովուրդը, և Նրա ձեռքի ոչխարներն ենք:

-ՍԱՂՄՈՍ 95: 1-7Ա -

մեջ, նրանք դարձան Աստծո ուղարկվածներ:

- Նրանք տանում էին հաշտեցման լուրը իրենց հաշտեցման միսիայով: (2Կոր.5:11-21):
- Պողոսն ասում էր « Արդ Քրիստոսի կողմից պատգամավորություն ենք անում, իբրև թե Աստված է հորդորում մեզանով, արդ աղաչում ենք Քրիստոսի տեղ հաշտվեցեք Աստծո հետ: Որովհետև Աստված Նրան, որ մեղք չգիտեր մեզ համար մեղք արավ, որ մենք Աստծո արդարությունը լինենք Նրանում» (2 Կոր. 5:20-21):

Բ. Հիսուսն Իր հետևորդներին տվեց Մեծ Հանձնարարությունը:

- «Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունովը: Նրանց սովորեցնելով, որ ամեն ինչ ձեզ պատվիրեցի՝ պահեն, և ահա Ես ձեզ հետ եմ մինչև աշխարհի վերջը: Ամեն»: (Մատթ. 28: 19-20):
- Վաղ եկեղեցին այս աշխարհում, սկսեց իրագործել այդ հանձնարարությունը, Անտիոքում, հանդիպումից ու գիտակցված երկրպագությունից հետո (Գործք 131: 1-4):

Գ. Գիտակցված երկրպագությունը սկսվում է, երբ մենք կիրառում ենք այնպիսի հոգևոր դիսցիպլինաներ, ինչպիսին են աղոթքը և ծոմը:

- Այդ ժամանակ Սուրբ Հոգին նրանց ուղարկում է, որպեսզի նրանք ուրիշներին դարձնեն նրանց դեպի հավատքը:
- Դա տեղի է ունենում երկրպագության համատեքստում:
- Երկրպագությունը ոգեշնչում է մեզ և մեր կյանքի մեջ ազատագրում է Աստծո ուժը:
- Երկրպագությունը Քրիստոսին դարձնում է մեր կյանքի կենտրոնը: Դա բոլոր հավատացյալների համար անհրաժեշտ դիսցիպլինա է, որը օգտագործում է Աստված, որպեսզի մեր մեջ ձևավորի Քրիստոսի կերպարը:
- Երկրպագությունը մենք պետք է դարձնենք մեր կյանքի մշտական պրակտիկան, ինչպես անձնական, այնպես էլ համայնքի կյանքում:

Դ. Ընդհանուր ծառայության ժամանակ, գիտակցված երկրպագությունը ժամանակ է տալիս Աստծուն գործել մեր մեջ, Իր սեփական ճանապարհով:

- Վաղ եկեղեցին չէր գործում, սեմինարների և կոմիտետների միջոցներով:
- Դրա փոխարեն նրանք հաճախ հավաքվում էին միասնական

երկրպագության ծառայությունների, և Աստծուն թույլ էին տալիս իրենց մեջ գործել Իր ճանապարհներով:
- Մենք պետք է ցանկություն ունենանք թողնելու մեր բոլոր ծրագրերը և Աստծուն ժամանակ տալ վերջացնելու Իր ծրագրերը մեր մեջ:

Ե. Գիտակցված երկրպագությունը տեղ է տալիս Աստծուն, որպեսզի Նա կարողանա ազատ գործել, երբ մենք սպասում ենք Իրեն:
- Մենք պետք է թույլ տանք Աստծուն արտահայտել Իրեն և համոզել մարդկանց, ստիպել շարժվել, փրկել և սրբագործել Իր ճանապարհով, երբ Նրան հաճելի է:
- Մենք պետք է ներկա գտնվենք ամեն ծառայության ժամանակ այն բանի սպասումով, որ Աստված այդ ծառայության ժամանակ կգա մեզ հետ հանդիպման և կգործի մեր մեջ:
- Մենք պետք է սպասենք, որ Աստված կգործի բացահայտ ձևով, երբ մենք ամեն օր հավաքվենք ծառայության: Մենք երբեք չպետք է բավարարված լինենք սովորական միօրինակ հանդիպումներով, որոնք պարզապես դառնում են սովորություններ:

Զ. Աստծո զավակները պետք է հավաքվեն միասին ամեն շաբաթ, որպեսզի նրանք բոլորը միասին գրավված լինեն Աստծո Հոգուց:
- Ոչինչ չի կարող փոխարինել մարդկային հոգուն այն էներգիան, որը նա ստանում է Աստծո Հոգուց:
- Դրա համար ամենահարմար ժամանակն է միացյալ գիտակցված երկրպագությունը:

2. Համաձայնեցված աստվածաբանություն

Ա. Մեր եկեղեցու ձայնը պետք է լսելի լինի ամբողջ քրիստոնեական Եկեղեցու մեջ:
- Մենք պետք է ասենք, թե ով ենք մենք աստվածաբանական տեսակետից:
- Մենք պետք է հաստատենք, թե ինչ է մեր գործունեության դրդապատճառը, և ինչպես ենք մենք ապրում մեր ամենօրյա կյանքում համաձայն մեր հավատամքին:

Բ. Սրանք համաձայնեցված աստվածաբանության համար մեր աղբյուրներն են:

- **Աստվածաշունչը:** Մենք հավատում ենք, որ Սուրբ գիրքը հանդիսանում է կարևոր հիմք Քրիստոսի կերպարին նմանվելու մեր գործընթացում:
- **Բանականություն:** Մենք հավատում ենք, որ Աստծո Հոգին գործում է ինտելեկտի միջոցով և տալիս է բանականություն հասկանալու համար:
- **Անձնական փորձ:** Մենք հավատում ենք, որ Աստված գործում է Քրիստոսին հետևող մարդկանց կյանքերի միջոցով:



Գ. Այս հավատամքները տալիս են մեզ համաձայնեցված աստվածաբանություն:

- Մենք քրիստոնյաներ ենք:
  - Մենք հաստատում ենք մեր հավատամքը Սուրբ Երրորդության մասին, այսինքն՝ մենք հավատում ենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:
  - Մենք հաստատում ենք մեր հավատքը դեպի Հիսուս Քրիստոսը՝ որպես Աստծո Որդի:
  - Մենք հավատում ենք , որ Քրիստոսը, Սուրբ Երրորդության երկրորդ անձնավորությունն է:
  - Մենք հավատում ենք օրթոդոքս հավատքի հանգանակություններին և Քրիստոնեական եկեղեցու ավանդույթներին:
- Մենք բողոքականներ ենք:
  - Մենք հավատում ենք, որ փրկված և արդարացված ենք շնորհքով, հավատքի միջոցով:
  - Մենք հավատում ենք, որ Ստվածաշունչը գրավում է կարևոր տեղ և հանդիսանում է հեղինակություն:
  - Մենք հավատում ենք բոլոր հավատցյալների քահանայությանը:

    - Մենք համարում ենք, որ քարոզը՝ դա երկրպագության գլխավոր բաղադրիչներից է և մենք ամբիոնը տեղադրում ենք եկեղեցական գործունեության կենտրոնում:
    - Մենք հավատում ենք, որ Սուրբ Հոգու պարգևները բաշխված են Քրիստոսի մարմնում եղած բոլոր հավատացյալների մեջ:
- Մենք ավետարանական եկեղեցի ենք:
    - Մենք հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսի հետ անձնական հարաբերությունները հնարավոր և անհրաժեշտ են, մեղքերի թողության և մեր բնավորությունը վերափոխելով Քրիստոսի նմանության միջոցով:
    - Մենք հավատում ենք մեր հավատքի վկայությանը, փոխելով մեր ապրելակերպը:
- Մենք վեսլիական եկեղեցի ենք:
    - Մենք հավատում ենք, որ Աստծո հիմնական բնությունը, որի շուրջը կառուցվում է ամբողջ աստվածաբանությունը, հանդիսանում է սերը այսինքն՝ «Աստված սեր է» (1 Հովհ. 4:8):
    - Մենք հավատում ենք, որ մարդիկ ունեն ազատ կամք այն բանի համար, որպեսզի նրանք ունենան գիտակցված փոխհարաբերություններ Աստծո հետ:
    - Մենք հավատում ենք, որ Աստված մարդկության հանդեպ, ցուցաբերում է գթասրտություն և շնորհք:
    - Մենք հավատում ենք, որ Աստծո նախնական շնորհքը գնում է մարդու առջևից, պահպանում է այդ մարդուն, որպեսզի նա խորությամբ չթաղվի մեղքի մեջ, և վերադարձնում է նրան հետ՝ դեպի Աստված:
    - Մենք հավատում ենք Աստծո փնտրող, քավող, փրկագնող և սրբագործող շնորհքին, որը բավարար է, կարող է աշխատել մարդու հետ և դարձնել նրան Աստծո որդի,

տալ նրան հաղթանակ, որպեսզի նա քայլի քրիստոնեական ճանապարհով:
    - Մենք լավատեսորեն հավատում ենք նրան, որ շնորհքը կարող է քանդել մեղքի ուժը մարդու կյանքից և վերածել նրան մեղավորից Աստծո որդու, որը իր ցանկությամբ հնազանդ է Աստծուն և նրա սիրտը լցված է սիրով:
    - Սրբությունը և սրբագործումը, այս կյանքում իրական հնարավորություններ են:
  - Մենք հավատում ենք Սուրբ Հոգու վկայությանը:
    - Մենք հավատում ենք այն վստահությանը, որը թույլ է տալիս գիտենալ մարդկանց, որ նրանց մեղքերը Աստված ներել է և դա նրանց տալիս է վստահություն, որ Հիսուս Քրիստոսի արյունը շարունակում է ծածկել նրանց անցյալը և տալիս է նրանց ամենօրյա հաղթանակ:
    - Մենք հավատում են Սուրբ Հոգու ղեկավարությանը, որը մարդկանց թույլ է տալիս առաջնորդվել Աստծուց, կյանքում կատարելու ամենօրյա որոշումներ: Աստծո Հոգին կարող է առաջնորդել Իր որդիներին հուշելով, փորձելով, և այսպիսով տալով նրանց կյանքին ուղղվածության զգացողություն:

Դ. Մենք հավատում ենք, որ սրբության կյանքի մեջ կան չորս հիմնական ասպեկտներ:

- Քրիստոսին նմանվելը՝ դա ամենօրյա փոխակերպում է Քրիստոսի կերպարին, Սուրբ Հոգու գործողության միջոցով, երբ մենք Աստծուն հնարավորություն ենք տալիս գործել մեր մեջ: «Արդ եթե մխիթարություն կա Քրիստոսով, եթե սերի սփոփություն, եթե Հոգու հաղորդություն, եթե գթածություն և ողորմություն, ապա լցրեք իմ ուրախությունը, որ նույն միտքն ունենաք, նույն սերը ունենալով, միաշունչ և նույնը խորհեք» (Փիլ. 2:1-2).
- Ապրելակերպը - կներկայացնի իրեն սուրբ նպատակների համար, որպեսզի այս աշխարհում կատարի Աստծո աշխատանքը: «Ես չեմ աղաչում, որ աշխարհիցը վեր առնես նրանց, այլ որ նրանց պահես չարից: Այս աշխարհքիցը չեն, ինչպես Ես էլ աշխարհքից չեմ: Նրանց

սուրբ արա Քո ճշմարտությունով, Քո խոսքը ճշմարտություն է» (Հովհ. 17:15-17).

- Գայթակղությունները և որոշում կայացնելու ուժը – երբ հնարավորություն կա հանձնվելու կախվածություններին կամ մարմնի ցանկություններին, կամ էլ չարին, բայց ունի Աստծուց ուժ ապրելու սուրբ կյանքով: « …և ձեր սրտերի աչքերը լուսավորվելով՝ գիտենաք թե ի՞նչ է նրա կոչումի հույսը, և ի՞նչ է իր ժառանգության փառավոր մեծությունը սուրբերում: Եվ ի՞նչ է նրա զորության գերազանց մեծությունը մեզանում, որ հավատացինք, իր կարող զորության հաջողության պես: Որ Քրիստոսումը գործադրեց՝ նրան մեռելների միջից հարուցանելով, և իր աջ կողմը նստեցրեց երկնավորներումը» (Եփ. 1:18-20).
- Հոգու պտուղը՝ դա Աստծո կատարյալ սերն է, որը արտահայտում է իրեն սիրո, ուրախության, համբերության, բարության, քնքշության, հավատարմության և ինքնակառավարման մեջ: «Վախ չկա սիրո մեջ, այլ կատարյալ սերը հեռացնում է վախը, որովհետև վախը տանջանք ունի, բայց նա որ վախենում է, կատարյալ չէ սիրո մեջ» (1 Հովհ. 4:18).

Ե. Մենք հավատում ենք *via media* ճանապարհին- միջին ուղի կամ ճանապարհ: Շատ հարցերում մենք ձգտում ենք խուսափել ծայրահեղ տեսակետներից: Մենք ուշադրություն ենք դարձնում ոչ թե մասնավոր դեպքերին և էքստրեմալ հայացքներին, այլ ավելի շատ մեջտեղում հավասարակշռված մտքերին, երբ դա հնարավոր է:

3. Ավետարանելու ցանկություն

Ավետարանելու ցանկությունը մեր պատասխանն է Հիսուս Քրիստոսի սիրուն և նրա ողորմությունը հանդեպ մարդկության: Նազովրեցու Եկեղեցին սկսվեց ավետարանելու ցանկությամբ: Այն շարունակում է մնալ այն բանի էությունը, թե ով ենք մենք: Ավետարանչության մասին Ֆինեաս Բրիզին՝ առաջին գլխավոր սուպերինտեդենտը ասել է. «Մենք պարտք ունենք և պետք է ավետարանը փոխանցենք ամեն մարդու այնպես, ինչպես մենք այն ստացել ենք ինքներս»: Մենք նպատակաուղղված ենք նրան, որպեսզի օգնենք մարդկանց իմանալու Հիսուս Քրիստոսով անձնական փրկարար հավատքի մասին:

Ա. Հիսուս Քրիստոսը նույնպես ուներ ավետարանելու ցանկություն, Նա ցույց տվեց թե ինչպես դա կարելի է անել.

- «Եվ նա ժողովուրդներին տեսնելով գթաց նրանց վրա, որ հոգնած և ցիրուցան եղած էին, ինչպես ոչխարները, որ հովիվ չունեին: Այն ժամանակ իր աշակերտներին ասեց. Հունձքը շատ է, բայց մշակները քիչ: Արդ աղաչեք հնձի Տիրոջը, մշակներ հանել իր հունձքի համար»: (Մատթ. 9:36–38).
- Հիսուսն ասաց. «Միթե՞ դուք չեք ասում , թե դեռ չորս ամիս կա և հունձքը կգա, ահա ասում եմ ձեզ, բարձրացրեք ձեր աչքերը, և տեսեք արտերը, որ սպիտակել ու հունձին հասել են»: (Հովհ. 4:35).

Բ. *Ավետարանելու ցանկությունը* փոխանցվել է մեզ Հիսուսից:

- «Եվ նրանց ասաց. Գնացեք բոլոր աշխարհքը, ավետարանը քարոզեցեք ամեն արարածի»: (Մարկ. 16:15).
- «Եվ նրանց ասեց թե այսպես է գրված, և այսպես պետք էր Քրիստոսին չարչարվել և երրորդ օրը մեռելների միջից հարություն առնել: Եվ նրա անունովը ապաշխարհություն և մեղքերի թողություն քարոզել բոլոր ազգերի մեջ Երուսաղեմից սկսած»: (Ղուկ. 24:46-47).

Գ. *Ավետարանելու ցանկությունը* Հիսուսով բացահայտվեց մեզ համար:

- «Եվ Արքայության այս Ավետարանը բոլոր տիեզերքում կքարոզվի ամեն հեթանոսներին վկայություն լինելու համար, և այն ժամանակ կգա վերջը»: (Մատթ. 24:14).
- «Գողը չի գալիս, բայց միայն որ գողանա և սպանե և կորցնե, Ես եկա, որ կյանք ունենան և ավելին ունենան»: (Հովհ. 10:10).

Դ. *Ավետարանելու ցանկությունը* և ավետարանելու ուժը հայտնվում է Սուրբ Հոգով լցվելու միջոցով:

- Նա մեզ ուժ է տալիս, մեզանից ամեն մեկին և ամբողջ համայնքին, ապրել ու վկայել սրբության մասին:
- «…Բայց դուք զորություն կառնեք՝ երբ որ Հոգին ձեզ վրա կգա, և իմ վկաները կլինեք Երուսաղեմունը և բոլոր Հրեաստանի և Սամարիայի մեջ, մինչև երկրի ծայրերը»: (Գործք 1:8).

Ե. Ավետարանելու ցանկությունը տրվում է Սուրբ Հոգով:

- Մեր մեջ Նրա կյանքը տեսանելի է բոլորին և նա արդյունավետ է:
- «Բայց Հոգու պտուղն է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, քաղցրություն, բարություն, հավատք, հեզություն, ժուժկալություն, այնպիսիների դեմ օրենք չկա: Բայց նրանք, որ Քրիստոսինն են, իրենց մարմինը խաչը հանեցին կիրքերով ու ցանկություններով միասին Եթե Հոգով ենք ապրում,

Հոգով վարվենք»: (Գաղ. 5:22–25).

Զ. *Ավետարանելու ցանկությունը* բերում է նոր կյանք և էներգիա, անհատ մարդկանց և եկեղեցու կյանքում ամբողջապես:

- « Որեմն Եթե մեկը Քրիստոսում է նոր ստեղծված է ,հները անցան ամեն բան նոր եղավ»: (2 Կոր. 5:17).
- «Տերն ամեն օր փրկվածներին ավելացնում էր եկեղեցու հետ»: (Գործք 2:47բ):

Է. *Ավետարանելու ցանկությունը* – դա մեր հնազանդության արտահայտությունն է Հիսուսին:

- Ավետարանի վերափոխող ուժի անհերքելի ապացույցներից է Պողոսի կյանքը:
- Իր վկայություններից մեկում Առաքյալը գրում է. «Որովհետև ես Հույներին և Բարբարոսներին, իմաստուններին և անմիտներին պարտական եմ: Այնպես՝ իմովսանն հոժար եմ ձեզ էլ, որ Հռոմում եք ավետարանը քարոզել: Որովհետև ես Քրիստոսի ավետարանը ամոթ չեմ համարում, որովհետև Աստված զորություն է փրկելու համար ամեն հավատացողի, առաջ Հրեային, և հետո հույնին» (Հռովմ. 1:14–16):

3. Մեր ցանկությունը լինել Քրիստոսի հետ և ծառայել – դա այն պահն է, երբ մենք մտնում ենք կատարելու Մեծ Հանձնարարությունը (Մատթ. 28:19-20), այնուհետև հետևում է ծառայության համար մեր ուսուցումը:

- Դրա հետևանքով բոլորը պետք է իմանան Քրիստոսի մասին:
- Դրա արդյունքում, ամեն մարդ, նույնիսկ նվազագույն օժտված և չգիտենալով ոչ մի մեթոդ և միջոց, պետք է կրքոտ ցանկություն ունենա կիսվելու Հիսուսի մասին լուրով:

Ը. *Ավետարանելու ցանկությունը* օգնում է մեզ ապավինելու Աստծո խոսքի ուժին, որը մղում է մեզ կիսվելու որիշների հետ, փրկության մասին բարի լուրով:

- Մենք ուսումնասիրում ենք Աստվածաշունչը հավատքով, այնուհետև մենք պատմում ենք, թե ինչ է ասում Աստծո Խոսքը
- Ավետարանական պատգամի ուժը, խոսում է տղամարդկանց և կանանց, տղաների և աղջիկների սրտերին, որոնց անհրաժեշտ է Աստծո հետ վերականգնել իրենց հարաբերությունները:
- Հիսուսն հանդիսանում է մեր օրինակը. «Որովհետև մարդի Որդին եկավ, որ որոնե և գտնե կորածը» (Ղուկ. 19:10): «…Նա տաճարում

ժողովրդին սովորեցնելիս և ավետարանելիս…» (Ղուկ. 20:1).

Թ. *Ավետարանելու ցանկությունը* մղում է մեզ նրան, որպեսզի ճանաչենք Քրիստոսին ամբողջությամբ:

- Դա խոսում է այն մասին, թե ով ենք մենք և ինչպիսին է մեր ապրելակերպը: Մեր մեր ապրելու ցանկությունը շատ չէ, քան ավետարանելու մեր ցանկությունը: Ընտրելով կյանքը, մենք ընտրում ենք ավետարանչությունը:
- Դա հաստատում է այն, ինչ որ մենք գիտենք: Ինչպես կույրի վկայությունը, որին բժշկել էր Հիսուսը. «Մի բան գիտեմ, կույր էի, հիմա տեսնում եմ»: (Հովհ. 9:25).
- Դա վկայում է նրա մասին, թե մենք ինչքան շնորհակալ պետք է լինենք այդ առավելության մասին. «Ձրի առել եք, ձրի տվեք» (Մատթ. 10:8բ):

Ժ. *Ավետարանելու ցանկությունը* մոտիվացնում է մեզ աշակերտության:

- Մեր կյանքի ընթացքում, մենք ցանկանում ենք ազդել մարդկանց վրա, ոմանց գիտենալով, ոմանց չգիտենալով, երբ նրանց պատմում ենք մեր հավատքի ճանապարհի մասին:
- Քրիստոսի ամեն հետևորդ պետք է մտածի Աստծո հետ իր հարաբերությունների մասին, և այդ ժամանակ անձնական վկայությունը տեղի է ունենում բնական ճանապարհով, ուրիշների հետ զրույցի ժամանակ:

Ի. *Ավետարանելու ցանկությունը* ոգևորում է մեզ ստեղծագործելու:

- Գործիքներ- մի քանի օրինակներ «*Հիսուս*» ֆիլմը, ավետարանչական խորանարդը և գունդը:
- Մեթոդներ-շատ մեթոդներ, մեկ լուր:
- Մարտավարություններ- մասսայական ավետարանչություն, ընկերություն և անձնական ավետարանչություն, փոքր խմբեր, ավետարանչություն քաղաքում և այլն:

4. Նպատակասլաց աշակերտություն

Ա. Հիսուսը կոչ էր անում դաստիարակել նպատակասլաց աշակերտներ:

- «Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունովը: Նրանց սովորեցնելով, որ ամեն ինչ ձեզ պատվիրեցի՝ պահեն, և ահա Ես ձեզ հետ եմ մինչև

աշխարհի վերջը: Ամեն»: (Մատթ. 28: 19-20)

- Եկեղեցին ունի նպատակասլաց մեթոդ, որպեսզի դաստիարակի Քրիստոսի նման աշակերտներ:
- Քրիստոսի նման աշակերտները- դրանք այն մարդիկ են, որոնք Քրիստոսի մեջ աճում և դառնում են Քրիստոսի նման և անում են այն ինչ Քրիստոսը: Նրանք մերժում են իրենց, հնազանդվում և սիրում են Աստծուն ամբողջ սրտով, հոգով, մտքով և ուժով(Մարկ. 12:30, հովհ. 15, Ղուկ. 9):
- *Նպատակասլաց աշակերտությունը* հարաբերությունների միջոցով - օգնել մարդկանց զարգացնելու հարաբերություններ Հիսուսի հետ և լինել նրան հանազանդ: Այս հարաբերություններում Քրիստոսի Հոգին վերափոխում է նրանց բնավորությունը Քրիստոսի բնավորության նման, փոխում է նոր հավատացյալների արժեքները, վերածելով նրանց Արքայության արժեքների և օգնում է նրանց դառնալու Նրա միսիայի մասնիկը, որը վերաբերվում է ուրիշ մարդկանց, նրանց տներին, եկեղեցիներին ու աշխարհին:

Բ. Մենք սկսում ենք նրանից, որ բերում ենք մարդկանց դեպի Հիսուս Քրիստոսի հետ անձնական հարաբերությունների:

- Հավատքի ճանապարհը սկսվում է մեղքերի խոստովանությունից և նրանց ներումը շնորհքով, Հիսուս Քրիստոսի հավատքի միջոցով:
- Քրիստոսով նոր արարածները, դառնում են վերստին ծնված և ընդունվում են Աստծո ընտանիք:
- Վերստին ծնունդը բերում է սրտի և ապրելակերպի փոփոխություն, որպես Աստծո շնորհքի վկայություն նրան ճանաչողների համար:
- Հավատքի համայնքում մենք միանգամից այդ նոր հավատացյալներին տալիս ենք հոգևոր կերակուր, հենց սկզբից սովորեցնելով նրանց, որ նրանք փրկվել են ոչ միայն իրենց համար, այլ նաև նրանց, որոնց վրա նրանք կարող են ազդել և բերել Քրիստոսին: Նրանք կլինեն աշակերտների դաստիարակներ, որոնք նույնպես կդառնան աշակերտների դաստիարակներ:
- Աշակերտությունը իր մեջ ներառում է նաև օգնություն ուրիշներին, որպեսզի նրանք նույնպես կարողանան հետևել Հիսուսին:

Գ. Մենք նպատակասլացորեն զարգացնում ենք Քրիստոսի նման աշակերտներ, քարոզի ծառայության միջոցով:

- Մեր հովիվները քարոզում են քարոզ-հորդորներ, այն մասին, թե

ինչպես աճել Հիսուս Քրիստոսի հավատքով:

- Մեր հովիվները քարոզում են քարոզներ, որոնք հիմնված են Աստվածաշնչի վրա, և նրանք տալիս են հոգևոր սնունդ իրենց մարդկանց, որպեսզի նրանք կարողանան աճել և զգալ ավելի մեծ ծարավ դեպի Աստվածաշնչի իմացությունը:
- Մեր հովիվները թույլ են տալիս Աստծո Խոսքին հիմք լինել աշակերտության համար:
- Մեր հովիվները սովորեցնում են մարդկանց, թե ինչպես ուսումնասիրեն Աստվածաշունչը և խորհեն Խոսքի վրա, թե ինչ է այն նշանակում, և ինչպես կիրառել այն մեր կյանքում:
- Մեր հովիվները ձգտում են բալանսավորված աստվածաշնչյան դիետայի, երբ քարոզում են ամբողջ տարվա ընթացում:
- Մեր հովիվները ապավինում են Աստծո Սուրբ Հոգուն, որպեսզի կենդանացնեն և հավասարակշռեն ամեն բան, ինչ որ նրանք անում են, և որպեսզի ձևավորեն Քրիստոսի նման աշակերտներ:
- Հիսուսը քարոզում էր շատ մարդկանց, և մանրամասնորեն սովորեցնում էր Իր աշակերտներին փոքր խմբերում:
- Հիսուսը առանց առակների չէր քարոզում, որպեսզի մարդկանց օգներ հասկանալու: (Մարկ. 4:34).

Դ. Մենք մարդկանց հրավիրում ենք կիրակնօրյա դպրոց, որպեսզի նրանք ստանան հոգևոր սնունդ և աճեն որպես Քրիստոսի նման աշակերտներ:

- Կիրակնօրյա դպրոցի մեր ուսուցիչները դասավանդում են դասեր, որոնց նպատակն է հանդիսանում դաստիարակել աշակերտների, որոնք կլինեն Քրիստոսի նման այն բանում, թե ինչպես նրանք Գիտեն Սուրբ Գիրքը և ինչպես են օգտագործում այն իրենց կյանքում:
- Կիրակնօրյա դպրոցի մեր ուսուցիչները անձամբ հետաքրքրված են երիտասարդ հավատացյալներով, պարապմունքներից հետո շփվում են նրանց հետ, որպեսզի պատասխանեն քրիստոնեական հավատքի մասին նրանց հարցերին և աջակցեն նրանց, որպեսզի աճեն Աստծո շնորհքով:
- Կիրակնօրյա դպրոցների մեր դաստիարակության սիստեմը, առաջարկում է ծրագրեր սկսած մսուրային տարիքից վերջացրած տարեցներով: Այն ներկայացնում է տարբեր ծրագրեր, տարբեր հերթականությամբ և օգնում է կազմակերպված ուսումնասիրել Աստվածաշունչը «Կրթիր երեխային իր ճանապարհին համեմատ,

ծերացած էլ չի հեռանա» (Առ. 22:6):

Ե. Մենք զարգացնում ենք Աստվածաշունչ ուսումնասիրող փոքր խմբերը, որոնք սովորեցնում են պատասխանատվության:

- Աստվածաշնչի ուսումնասիրությունը փոքր խմբերում օգնում է ամբողջ խմբին և ամենքին առանձին, ինչպես նորահավատներին, այնպես էլ վաղուց հավատքի մեջ արմատացածին:
- Փոքր խմբերում զարգացնում են առողջ հարաբերություններ, որոնք դառնում են բարեկամական կապեր և ապրելակերպի մի մասնիկը:
- Այդ խմբերը առաջարկում են սոցիալական փոխհարաբերությունների և Աստվածաշնչի ուսումնասիրության որոշակի խառնուրդ , որը կարևոր է շնորհքով աճելու համար:
- Աշակերտության համար փոքր խմբերը զարգանում են աջակցող սիստեմի, որը օգնում է ապրելու միասին ոչ միայն կիրակի օրերը:

Զ. Մենք աջակցում ենք աշակերտներին Քրիստոսի նման հոգևոր աճին, եկեղեցում լավ պլանավորված դասացուցակի միջոցով:

- Աստվածաշնչից համարների սովորելու ծրագրեր:
- Քարավան մանկական ծառայությունը:
- Ամառային աստվածաշնչյան դպրոցներ երեխաների համար:
- Ծննդյան և Հարության ծրագրեր:
- Ջանքեր բարեգործության համար:
- Աշակերտության ծառայություն ուրիշների համար:
- Ծառայություն տղամարդկանց և կանանց, տարեցների, միայնակների, հատուկ կարիքավորների և սպորտային թիմերի համար: Կան տեղական շատ խմբեր, որոնք օգնում են մարդկանց կապ հաստատելու Քրիստոսի և նրա Եկեղեցու հետ:

Է. Մենք խնդրում ենք հավատցյալներին օգտագործել բոլոր միջոցները, որոնք նրանց մատչելի են նրանց աճի և անձնական հավատքի զարգացման համար:

- Կարդա Աստվածաշունչը, նրա ուսումնասիրությունը օգնում է, լսիր Աստվածաշնչի ձայնագրությունները:
- Ամեն օր աղոթիր:
- Լսիր քրիստոնեական երաժշտություն:
- Կարդա քրիստոնեական գրականություն:
- Գտիր գործակցի որին վստահում ես, որպեսզի նա աղոթի քեզ համար և դու դառնաս Քրիստոսի նման:

- Գտիր այնպիսի ընկեր, որը քեզ այնքան է սիրում, որ քեզ կտա դժվար հարցեր:
- Զարգացրու քո մեջ ցանկություն, պարբերաբար մարդկանց պատմելու այն մասին թե Աստված ինչ է անում քո կյանքում:

Ը. Մենք հավատացյալներին խնդրում ենք սովորել, ամեն օր փնտրել Աստծո ներկայությունը իրենց կյանքի մեջ:

- Մենք կարող ենք նկարագրել քրիստոնեական կյանքը, որպես նեղ անձնական հարաբերություններ մեր Տիրոջ և Փրկչի Հիսուս Քրիստոսի հետ:
- *Նպատակասլաց աշակերտությունը* օգնում է աճելու և նմանվելու Քրիստոսին, եթե նրանք ժամանակ են անցկացնում Հիսուսի հետ:
- Այսպիսով, մենք ամեն օր լսում ենք Քրիստոսի ձայնը, մենք ամեն օր սնվում ենք Նրա Խոսքով, մենք վայելում ենք Նրա ներկայությունը:
- Քրիստոսի նման աշակերտները նպատակասլաց որոնում են Նրան, և պատրաստ են Նրանով կիսվելու բոլոր նրանց հետ, ում կյանքերին նրանք կհպվեն:

Թ. Մենք աջակցում ենք աշակերտներին, որպեսզի նրանք նպատակասլացորեն դաստիարակեն նոր աշակերտներ:

- Տերը ուղարկել է մեզ, և իշխանություն է տվել դաստիարակել աշակերտներ (Մատթ. 28:19-20):
- Մենք աղոթքով խնդրում ենք հասուն քրիստոնյաներին նպատակասլացորեն կրթել և խրատել մեզ:
- Մենք աղոթքով խնդրում ենք փոքր խմբերի հավատացյալներին, լինել աշակերտության խմբի մի մասնիկը:
- Մենք ներդնում ենք մեր կյանքերը այդ աշակերտների մեջ, երբ մենք միասին փնտրում ենք Տիրոջը:
- Փոքր խմբերում Աստվածաշնչյան պատմություններ պատմելով, ստացվում է Աստվածաշնչյան ամուր հիմք նրա համար, որպեսզի օգնենք աշակերտներին ուսումնասիրելու Աստվածաշունչը, և փոխանցել նրա պատգամը իր ազդեցության ոլորտում:
- Աղոթքը, Աստծո Խոսքը և մեկը մյուսին նպատակասլաց օգնությունը նրա համար է, որպեսզի դառնանք ինչպես Հիսուսը, և այն բնութագրում է եկեղեցում դինամիկ աշակերտությունը:

5. Զարգացող եկեղեցի

Ա. Քրիստոնեական եկեղեցին սկսվել է Հիսուս Քրիստոսից, որը ստեղծել է հավատքի առաջին համայնքը:

- Հավատքի համայնքը պարբերաբար հավաքվում էր միասին, որպեսզի երկրպագեին Աստծուն:
- Հետո այն սկսեց աճել ու կրկնապատկվել, հայտնվեցին նոր եկեղեցիներ, ի շնորհիվ Պողոսի և Բառնաբասի առաջին միսիոներական ճանապարհորդության: (Գործք 13-14)

Բ. Պողոսը մեկնեց իր երկրորդ միսիոներական ճանապարհորդությանը, որպեսզի հիմնի նոր եկեղեցիներ, բայց Սուրբ Հոգին պատվիրեց նրան մեկնել ուրիշ ուղղությամբ (Գործք 16):

- Մենք պետք է բաց մնանք Աստծո նոր տեսիլքների և Նրա աշխատանքի համար, ինչպես նաև Նրա Սուրբ Հոգով առաջնորդվելու համար:
- Պողոսը տեսիլք էր ունեցել և այդ տեսիլքը ուրիշ մարդկանցից չէր, կամ էլ համայնքի քվեարկությունից: Այն եկել էր Աստծո սրտից: Նոր եկեղեցիների հաստատման մեր տեսիլքները նույնպես պետք է գա Աստծո սրտից:
- Պողոսը տեսիլքում մարդ էր տեսնում: Այն տեսիլք չէր քարտերով, կամ ռազմավարությամբ, կամ կարգախոսերով, սխեմաներով կամ էլ ծրագրերով: Պողոսի տեսիլքը ուղղված էր կորսված մարդկությանը: Նոր եկեղեցիների հաստատման մեր տեսիլքները պետք է կենտրոնացված լինեն կորած մարդկանց վրա, որոնց պետք է հարաբերություններ Հիսուսի հետ:
- Պողոսի տեսիլքում Մակեդոնացի մարդ էր: Այդ մարդը կոնկրետ տեղից էր, մշակույթից, պատմությունից և խոսում էր իր լեզվով: Աստված մեզ նույնպես կտա տեսիլք կոնկրետ մարդկանց խմբի կամ համայնքի համար: Մեզ անհրաժեշտ է բացել մեր անձը Աստծո համար և լինել Նրան հնազանդ:
- Պողոսի տեսիլքի Մակեդոնացի մարդը կանգնած էր: Այդ մարդը Պողոսից ցածրահասակ չէր: Մենք նայում ենք միմյանց աչքերին: Այն մարդկանց, ում մենք գնում ենք ավետարանով, արժանի են հարգանքի:
- Պողոսի տեսիլքի մարդը կանգնած կանչում էր. «Արի՛ և օգնիր մեզ» : Այսպիսի տեսիլքը պետք է մոտիվացնի մեզ: Մենք պետք է գնանք

դեպի մեր քաղաքները, մեր հարևանները, մեր ցեղերը և մեր ընտանիքները: Մենք պետք է Քրիստոսին ներկայացնենք այս աշխարհին:

Գ. Աստվածային տեսիլքը իր մեջ պարունակում է մշտական Աստվածային առաջնորդություն, երբ Նա Պողոսին բացահայտում է եկեղեցու զարգացման Իր ծրագիրը:

- Պարզվեց, որ Մակեդոնացի մարդը կին էր: Լիդիան Փիլիպպեից, դարձավ այն, ինչ ավելի արագ արձագանքեց ուրիշներից այդ ծառայությանը:
- Պողոսը գտավ առավել լավ լսարան կանանց շրջանում, որոնք աղոթում էին գետի ափին:
- Այժմ Պողոսը իր աշխատանքը սկսեց տանը, այլ ոչ թե սինագոգում, ինչպես առաջին անգամ, երբ եկեղեցի սկսեց:
- Լիդիան թանկարժեք կտորեղենի վաճառողուհին այդ տնային խմբակի ավագն էր:
- Եկեղեցու զարգացման ռազմավարությունները, ներառում են մոդելներ, որոնք առաջ օգտագործվել են:

Դ. Եկեղեցի հաստատելու համար մեծ զոհեր են հարկավոր:

- Ծառայության հետ կապված գործողությունները Պողոսին և Շիղային բանտ բերեցին: Նրանք սիրով կրեցին այդ անձնական զոհը: Երբ նրանք տառապում էին հանուն Հիսուսի, նրանք երգում ու փառաբանում էին Նրան: (Գործք 16:25)
- Այսօր եկեղեցու առաջնորդները և հետևորդները վճարում են նույն գինը երբ սկսում են նոր եկեղեցիներ: Դրա համար անհրաժեշտ է աղոթքի շատ ժամեր, արցունքներ, ծանր աշխատանք, ջանքեր, փող և երբեմն էլ արյուն թափել, որպեսզի սկսվի նոր եկեղեցի:
- Չնայած Պողոսի և Շիղայի անձնական պրոբլեմների, նոր տնային եկեղեցին սկսվեց ի շնորհիվ այն բանի, թե ինչ տեղի ունեցավ Փիլիպպեցի բանտապահի հետ, որպես նոր եկեղեցու հովվի:

Ե. Մենք պետք է ապրենք Աստծո ներկայության մեջ, որպեսզի մենք կարողանանք զգալ և հասկանալ Սուրբ Հոգու ներկայությունը, չնայած մեր հանգամանքներին:

- Պողոսն ու Շիղան բանտում եղած գիշերային իրենց ծեծը չէին համարում անձնական կորուստ: Ավելի շուտ նրանք զգում էին, որ Սուրբ Հոգին նրանց հաղթանակ էր տալիս, չնայած բացասական

հանգամանքներին:

- Պողոսն ու Շիղան գիտեին, որ նրանք գտնվում են Սուրբ Հոգու ղեկավարության տակ: Նրանք գիտեին, որ Նա հոգս կտանի իրենց համար:
- Երկրաշարժը, որը տեղի ունեցավ Փիլիպպական բանտում, հիշեցնում է մեզ, որ Աստված դեռ մասնակցում է այդպիսի իրավիճակներում (Գործք 16:25-26): Նա չի մոռանում մեր մասին, երբ ծառայության մեջ կա ծանրություն և դժվարություններ:
- Երբ մենք հնազանդ ենք Աստծուն և Նրա կամքին, Աստծով որոշված ժամանակին, Տերը միջամտում է օգտագործելով մեծ ուժ: Այն ժամանակ երբ չարը հակառակվում է Աստծո Արքայությանը, վերջին խոսքը միշտ Աստծունն է:
- Մենք ինքներս չենք կառուցում Աստծո Արքայությունը, Աստված է կառուցում Իր թագավորությունը:

Զ. Եկեղեցու զարգացման ռազմավարությունը, ամբողջ Քրիստոնեական եկեղեցու պատմության ընթացքում փոփոխվել է:

- Առաջին 100 տարիների ընթացքում Քրիստոնեական եկեղեցին չէր կառուցում եկեղեցական շենքեր:
- Նվիրված եկեղեցական շենքի կոնցեպցիան, ինչպես նաև սեփականության և վարձատրվող հովիվների գաղափարը եկավ ավելի ուշ:
- Նազովրեցու Եկեղեցում տրվում է այսպիսի եկեղեցու սահմանում. Ցանկացած խումբ, որը պարբերաբար հանդիպում է որոշակի տեղում և ժամանակում հոգևոր շինության, փառաբանության կամ քարոզի համար նշանակված առաջնորդի հետ, և եթե նրա պատգամը և միսիան համաձայնեցվում է Նազովրեցու Եկեղեցու գաղափարների հետ, կարող է կոչվել եկեղեցի, և հաշվարկվի շրջանի հաշվետվությունների և ամբողջ եկեղեցիների վիճակագրությունների մեջ (սուպերինտենդենտների Գլխավոր Խորհուրդ): Որիշ խոսքերով, եկեղեցին՝ դա հավատացյալների խումբ է, այլ ոչ թե շենք կամ սեփականություն:
- Եկեղեցին հիմա էլ առաջնորդում է Սուրբ Հոգին, օգտագործելով նոր հնարավորություններ աճի համար:
- Ամեն եկեղեցի պետք է բացի դուստր եկեղեցի:
- Այդ դուստր եկեղեցիները հանդիպում են տներում, կամ մեկ ուրիշ մատչելի տեղերում:

- Ամեն հովիվ պետք է հաստատի օգնական հովիվ, որը անցնում է ծառայողի համար նախատեսած կրթական ծրագիր:
- Դուստր եկեղեցիների հաստատման այս մոդելը ֆինանս չի պահանջում: Անդամները կարող են պատասխանել Աստծո կանչին և օգնեն սկսել նոր եկեղեցիներ:
- Այս մոդելը նոր տեղերում և ամբողջ աշխարհում, Աստծուն օգնում է աճեցնել Իր եկեղեցին: Նրան միայն անհրաժեշտ են ընկալող սրտեր, որպեսզի պատասխանեն կանչին և թույլ տալ Աստծուն գործելու:

Է. Եկեղեցու զարգացման նպատակն է – Քրիստոսի համար հասնել ուրիշ մարդկանց:

- Հիսուսն ասաց. «…Ես ուրիշ քաղաքներին էլ պետք է Աստծո Արքայությունը ավետարանեմ, որովհետև իսկ սրա համար ուղարկվեցի» (Ղուկ 4:44)
- Մենք հանդիսանում ենք Աստծո Արքայության ուղղարկվածները, որոնք իրենց կյանքերը նվիրել են եկեղեցու զարգացմանը:
- Մեր ջանքերը ուղղարկված չեն նրան, որպեսզի միայն աջակցենք կազմակերպությանը:
- Մենք ցանկանում ենք, որ ինչքան հնարավոր է շատ մարդիկ գան Հիսուս Քրիստոսի փրկչական գիտակցությանը:
- Դրա համար մենք ցանկանում ենք այդ հավատացյալներին դաստիարակել և նրանց մեջ վերականգնել Աստծո կերպարը:
- Հիսուսն ասաց. «ահա ես ասում եմ ձեզ, բարձրացրեք ձեր աչքերը, և տեսեք արտերը, որ սպիտակել են և արդեն հնձին է հասել» (Հովհ 4:35):

6. Փոխակերպող առաջնորդություն

Ա. Մենք ցանկանում ենք Քրիստոսի նման առաջնորդներ: Հիսուսը մեր օրինակն է, դրա համար փոխակերպող առաջնորդը դա՝ Քրիստոսի նման առաջնորդ է:

Բ. Փոխակերպող առաջնորդը- համեստ ու հնազանդ է:

- Նրանք հետևում են Հիսուս Քրիստոսին, որը հնազանդեցրել էր Իրեն Հոր կամքին (Փիլ. 2:5-8):
- Նրանք լրիվ կախված են Աստծուց, Նրանից պատասխանված աղոթքներից, և նրանց կարիքի բավարարումից (Հովհ.15:7):
- Նրանք հնազանդվում են ուրիշների հեղինակությանը և քիչ են

մտածում իրենց մասին (Եփ. 5:21):

Գ. Փոխակերպող առաջնորդները ծառայողներ են:

- Նրանք հետևում են Հիսուս Քրիստոսի օրինակին, որը չէր եկել, որ Իրեն ծառայեն, այլ որպեսզի ծառայի ուրիշներին (Մարկ. 10:45; Մատթ. 20:28):
- Նրանք առաջնորդվում են այդպիսի ծառայության հոգով և ուրիշների նկատմամբ նմանօրինակ հարաբերություններով (Փիլ. 2):

Դ. Փոխակերպող առաջնորդները ունեն տեսիլք:

- «Առանց մարգարեության ժողովուրդը կվայրենանա» (Առ. 29:18):
- «Եվ Տերը ինձ պատասխան տվավ և ասեց. Պարզորոշ գրիր տեսիլքը այդ տախտակների վրա, որպեսզի ով որ կարդա պարզ կարդա» (Ամբ. 2:2):
- Հիսուսը պատկերեց Աստծո Արքայության տեսիլքը: Մենք պետք է անենք նույնը, այնպես, որ բոլորը դա պարզ հասկանան:
- Այդպիսի բնութագիրը դա այն է, ինչով առաջնորդները տարբերվում են հետևորդներից: Տեսիլքով առաջնորդները փնտրում են Աստծո տեսիլքը եկեղեցու համար, և կիսվում են այդ տեսիլքով ուրիշների հետ:

Ե. Փոխակերպող առաջնորդները ունեն ռազմավարական մտածելակերպ:

- Նրանք հնարավորություն ունեն փոխանցել իրենց տեսիլքը համայնքներին և դարձնել նրանց Աստծո Արքայության գործիքներ:
- Նրանք հասկանում են մեր ժամանակների հանգամանքները և գտնում են աստվածաշնչյան պատասխաններ, որոնք պետք է դառնան Աստծո Արքայության մի մասնիկը, ինչպես անում էին Իսաքարի որդիները (1 Մն. 12:32):
- Նրանք տեսնում են այն հոգիները, որոնք պետք է դառնան Աստծո Արքայության մի մասնիկը:
- Նրանք տեսիլքը դասավորում են կոնկրետ քայլերի և գործողությունների, որպեսզի հավաքագրեն և ուղարկեն հավատացյալներին հասունացած դաշտերը:
- Արքայության համար, նրանք կարող են տեսիլքը և միսիան դարձնել պարզ, բայց արդյունավետ ծրագիր: (Ղուկ. 14:28-30):

Զ. Փոխակերպող առաջնորդները ստեղծում են թիմեր:

- Հիսուսը մեր օրինակն է: Նա ստեղծեց թիմ, նրան ուժ տվեց և ամբողջ ծառայությունը ինքը չարեց: (Մատթ.10):

- Հիսուսի աշակերտները սովորական մարդիկ էին, բայց նրանք աշխարհը շուռ տվին: (Գործք 17:6):
- Փոխակերպող առաջնորդները ստեղծում են թիմեր Աստծո Արքայության համար, ընդգրկում են եկեղեցու բոլոր անդամներին:

Է. Փոխակերպող առաջնորդները գթասիրտ են և ինքնավստահ:

- Երբ Հիսուսը ուղարկեց իր աշակերտներին ավետարանելու, Նա նրանց ասաց. «խորագետ եղեք օձերի պես, և միամիտ աղավնիների նման» (Մատթ. 10:16):
- Փոխակերպող առաջնորդները պետք է իմանան ինչպես հավասարակշռեն օրենքն ու շնորհքը, ճշմարտությունն ու գթությունը և ամեն բան հավասարակշռել սրբության հետ:
- Որոշումներ կայացնելու ժամանակ, նրանք պետք է լինեն իմաստուն և հավատարիմ մնալ իրենց որոշումներին:
- Սակայն նրանց որոշումները պետք է ընդունվեն գթասրտությամբ:
- Նրանք պետք է խոսեն ճշմարտություն և սեր (Եփ. 4:15):

Ը. Փոխակերպող առաջնորդները ամեն բան պարզ են բացատրում:

- Հիսուսը Իր ծառայության ժամանակ հաճախ ասում էր. «Ով, որ լսելու ականջ ունի թող լսի» (Մատթ. 13:43): Հիսուսն ուզում էր, որ Նրա հետևորդները լսեն մշտապես և ուշադրությամբ:
- Փոխակերպող առաջնորդները պետք է խոսեն այնպես պարզ և ճիշտ, ինչպես Հիսուսը:
- Փոխակերպող առաջնորդները հասկանում են լուրի համոզիչ, հստակ, և պարբերաբար փոխանցման կարևորությունը. «քանզի եթե շեփորը անորոշ ձայն արձակի, ո՞վ կպատրաստվի պատերազմի » (1 Կոր. 14:8):

Թ. Փոխակերպող առաջնորդները իշխանություն են տալիս ուրիշներին նրա համար, որպեսզի բարձրացնեն նոր սերունդ, որը կղեկավարի թագավորությունը:

- Այն ինչպես ղեկավարում էր Նավեյան Հեսուն, նոր սերնդից չդաստիարակեց առաջնորդների: Նա առաջնորդ էր միայն իր սերնդի համար: (Դատ. 2:10):
- Փոխակերպող առաջնորդները չեն կառուցում կայսրություններ, որպեսզի իրենք իշխեն, նրանք հաստատում են իրենց սերունդը և հաջորդը:
- Նրանք գտնում են, սովորեցնում զարգացնում հետևորդների, որոնք

էլ իրենց հերթին իշխանություն են տալիս, հորդորում և դաստիարակում են առաջնորդների հանուն Աստծո Արքայության:

- Ոչ մի ղեկավարություն հաջողված չի, եթե չկա ղեկավարության հաջորդականություն հետագա սերնդների համար «…Եվ այն բաները որ ինձանից լսեցիր շատ վկաներով, հանձնիր հավատարիմ մրդկանց, որ կարող լինեն ուրիշներին սովորեցնել» (2 Տիմ. 2:2):

7. Նպատակասլաց գթասրտություն

Ա. Նպատակասլաց գթասրտությունը ցուցադրում է Աստծո գթաց սերը:

- Այն, որ Աստված ուղարկեց Իր Որդուն աշխարհ և այն, որ Հիսուսը մեռավ մարդկության համար, դա ՝ Աստծո սիրո և գթասրտության գլխավոր պարգևն է:
- Հովի 3:16-17 ասում է, որ Աստված տվեց Իր Որդուն Իր գերազանց սիրուց, որպեսզի մենք կարողանանք ունենալ հավիտենական կյանք: Այնպես էլ 1Հովհ. 3:16-17 մեզ ասում է, որ Աստծո սերը մարդկության հանդեպ արտահայտվում է գթասրտության գործողությունների մեջ, որոնք դրսևորվում են հավատացյալների կողմից դեպի Աստծո արարչագործությունը:
- Հիսուսի կյանքը, Նրա ծառայությունը, մահը և հարությունը ցույց են տալիս, թե ինչքան էր Նրան սերը դրդում գործողության դեպի ուրիշները, և դեպի ամբողջ աշխարհը: (Մատթ. 9:36)

Բ. Նպատակասլաց գթասրտությունը միշտ կատարվում է Հիսուսի անունով:

- Հիսուսը, մեր գթասրտության օրինակն է: Ավետարաններում Հիսուսը Իր ամբողջ սրտով «տառապում» էր մարդկության համար:
- Հիսուսը հատկապես գթասիրտ էր և ցույց էր տալիս Իր սերը հատկապես աղքատներին, հիվանդներին, մերժվածներին և անպաշտպաններին:
- Լինելով լիակատար Աստված և մարդ, Հիսուսը օրինակ է այն բանի, թե ինչպես պետք է ապրել և սիրել:
- Մենք գործում և ծառայում ենք, գթասրտություն ենք ցուցաբերում կամ առատ աջակցություն Հիսուսի անունով, և մենք ներդնում ենք մեր ուժերը, որպեսզի ցույց տանք Հիսուսի սերը: (Մատթ. 10:42):

Գ. Նպատակասլաց գթասրտությունը հարգում է ամեն մարդու անհատականությունը:

- Աստծո ժողովուրդը առաջարկում է հույս, սեր և օգնության ճանապարհ Հիսուսի անունով, որպեսզի հարգանքով վերաբերվեն, ամեն մարդու հետ, որը ստեղծվել է Աստծո պատկերով, այնպես էլ Աստծո արարչագործության հետ:
- Գթասրտության մեջ չկան ուրիշ մոտիվներ, բացի տարածելուց Քրիստոսով Աստծո սերը:

Դ. Նպատակասլաց գթասրտությունը բխում է վերափոխված հավատցյալներից բնական ձևով:

- Եկեղեցին այս աշխարհում կանչված է մարմնավորելու Աստծո սերը և գթածությունը:
- Գթասրտության գործողությունը երբեք չի կատարվում մարդկային ջանքերով, կամ սոցիալական ակտիվության շնորհիվ:
- Որպես Քրիստոսի մարմին, գթասրտության մասին մեզ կոչը, վերաբերվում է կյանքի բոլոր բնագավառներին, ձևավորված Քրիստոսի կյանքով և Սուրբ Հոգու ղեկավարության ներքո:
- Սուրբ Հոգին վերափոխում է հավատացյալների կյանքը, որոնք գործում են, որպեսզի իրենց հերթին բերեն ֆիզիկական, սոցիալական և հոգևոր ձևափոխում այս աշխարհում:
- Գթասրտությունը պետք է լինի ամեն համայնքի կյանքի և ծառայության անբաժանելի և ակտիվ մասը:

Ե. Նպատակասլաց գթասրտությունը դա՝ ամբողջական միսիայի մեր վեսլիական սահմանումն է:

- Մենք ուղարկված ենք Աստծո կողմից, և մեզ ուժ է տրված Սուրբ Հոգուց աշխարհ գնալու համար , որպեսզի սիրենք և ծառայենք Աստծուն:
- Մենք հավատում ենք, որ արդեն ամեն հավատացյալի կյանքում Հայրը գործում է Հոգու ուժով, և մենք կանչված ենք գնալու նրանց հետ և կատարել այդ բարի գործը:
- Իրական ավետարանչության հետ հետևում է կոչ և նվիրվածություն, մտնել նրանց կյանքերը, ովքեր մեր կողքին են և մասնակցել նրանց կյանքի մեջ:
- Հանուն Հիսուսի, մենք գնում ենք դեպի կոտրվածները և տառապողները, և մենք ցանկանում ենք բերել բժշկություն, հույս, խաղաղություն և սեր այն մարդկանց, որոնք մերժված են և անպաշտպան:

- Մենք մոտենում ենք մեկս մյուսիս, ի շնորհիվ համայնքներում ընկերության և սիրո, և դա բերում է որոշակի սոցիալական հետևանքների: Հենց այդպես Աստված կառուցում ու ընդարձակում է Քրիստոսի Մարմինը:

Զ. Նպատակասլաց գթասրտությունը բխում է մեր կյանքերից և արտահայտում է մեր նվիրվածությունը Աստծո միսիային ազատագրելու հիվանդ աշխարհը:

- Մենք ցանկանում ենք տեսնել, լսել և օգնել ավերված և տառապող աշխարհին, այնպես, ինչպես դա անում է Աստված:
- Մենք ցանկանում ենք օգտագործել բոլոր ռեսուրսները, որոնք մենք ունենք, որպեսզի փոքրացնենք մարդկային տառապանքը և հետևենք այս աշխարհում և այս աշխարհի համար սիրո և խաղաղության Աստվածային վերականգնման ծրագրին:
- Մենք նաև ցանկանում ենք փոխել հասարակական սիստեմները, որոնք սևեռված են նրան, որ ստեղծում են սխալ կառուցվածքներ որոնք օգնում են ճնշելու մարդկանց և մենք պայքարում ենք դրա դեմ Հիսուսի անունով:
- Ամեն ինչի մեջ, ինչ որ անում ենք, մենք ուզում ենք օգնել կատարելու Աստծո Միսիան և բերել Աստծուն փառք (Միք. 6:8):

ՄԵՐ ՎԵՍԼԻԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈԽԱԿԵՐՊՈՂ ՇՆՈՐՀՔԻ ՀՐԱՇՔԸ

«Շնորհքը, որը ավելի մեծ է քան մեր ամբողջ մեղքը»: Ի՞նչ զարմանալի միտք, և այն հիմնի միայն առաջին տողն է:

Հիսուսի մեջ Աստված մարմնավորվեց և գործեց վճռականորեն, որպեսզի հաշտեցնի Իր հետ աշխարհին (Հովհ. 3:15-16; Հռովմ. 1:1-16): Երբ դեռ մենք մեղավոր էինք, Աստված տվեց Իր Որդուն «որպես քավության զոհ» մեղքերի համար (Հռովմ. 3:25): Ամբողջ աշխարհի Արարիչը Իր վրա վերցրեց աշխարհի մեղքերը և պատրաստեց մեզ համար փրկություն:

Հիսուս Քրիստոսում է Աստծո արդարությունը, և Նրա փրկությունը հայտնվեց (Հռովմ. 3:21): Եթե Աստված այդ չաներ, ապա ամբողջ մարդկությունը անհույս և հավիտյան կբաժանվեր Աստծուց (Եփ. 1:5-2:10): Բայց դա պատահեց և մեզ Աստծուց բաժանող բոլոր ուժերը հաղթվեցին (Կող. 2:15): Այժմ «Հիսուս Քրիստոսի հավատքով» (Հռովմ. 3:22) մենք դարձանք ազատ (Հռովմ.8:2):

Նոր Կտակարանում լսվում է Աստծուն փառաբանող միաբան և շարունակվող հիմն, որը մեզ էր տալիս իր հարստությունները (Եփ. 1:6-10): Քրիստոսում էր բնակվում Աստծո ամբողջական մարմնավոր լեցունությունը, և նրանք ովքեր ընդունում են Հիսուսին կհասնեն Նրանում ամբողջական լեցունության (Կող. 2:8-15): Աստծո շնորհքի առավելությունները թվելուց հետո, Պողոսը բացականչում է. «Օ՜, խորություն Աստծո, հարստության, իմաստության և գիտության» (Հռովմ.

11:31): Որոշակի հարստություններ կարող են անվանվել. Մեղքերի թողություն, Հոգու բնակություն մեր մեջ, փոխակերպում Քրիստոսի պատկերի պես, հավիտենական կյանք, խաղաղություն Աստծո հետ, սրբագործում, Եկեղեցու հաղորդակցություն, Տիրոջ վերադարձի հույս:

Երբ Հիսուսը խոսում էր, շատ մարդիկ լսեցին այն, ինչ իրականում նրանց համար դարձավ «բարի լուր», այսինքն Աստված մեղավորներին հաշտեցրեց Իր հետ, շնորհքի միջոցով: Նույնիսկ բոլորի կողմից ատելի մաքսավորը կամ շնության մեջ բռնված կինը, լսելով Աստծո սիրո մասին, կարողացան ապաշխարել, ստանալ ներում և հավիտենական կյանք: Աստված շնորհքի միջոցով Ինքը Իրեն նվիրում է բոլորին, ով խոստովանվում է իր սեփական անկարողությունը, որպեսզի վաստակի Նրա սերը (Ղուկ. 15):

Դրանից շատ առաջ, երբ մենք իմանում ենք դրա մասին, Սուրբ Հոգին գործում է և փորձում է մեզ բերել փրկության: Սաղմոսերգուն ասում է, որ Երկրի վրա չկա մի այնպիսի տեղ, որտեղ հնարավոր չէ լսել Աստծո ձայնը (Սաղ.19:4): Պողոսը մեզ ասում է, որ արարչության ամեն վայրկյանի գոյությունը կախված է Քրիստոսից (Կող. 1:15-17): Հովհաննեսը հռչակում է, որ Քրիստոսը լուսավորել է բոլորին: (Հովհ. 1:9):

Այսպիսի ճանապարհներով, որոնք համապատասխան են Աստծո ստեղծագործական ակտիվությանը և հավատարմությանը, Սուրբ Հոգին գործում է ամեն մարդու կյանքի և հասարակության կյանքի մեջ, որպեսզի բացի դռներ Ավետարանի համար: Այն տեղի է ունենում մինչ այն պահը, երբ Ավետարանը կհռչակվի և մարդկանց կպատրաստի, որ նրանք լսեն և ընդունեն Բարի Լուրը:

Հետադարձ հայացքով բոլոր քրիստոնյաները կարող են տեսնել, թե ինչպես է Սուրբ Հոգին բերել նրանց քրիստոնեական փրկագնման: Մենք խոսում ենք Աստծո շնորհքի նախապատրաստական գործողության մասին, որը կոչվում է «նախնական շնորհք», կամ շնորհք, որը գալիս է նախապես:

Աստված մեզ հետ է: Այն ամենը, ինչ Աստված կատարել է Իր Որդու միջոցով, այժմ նա առաջարկում է Սուրբ Հոգու միջոցով: Իրականում բոլոր արարչագործությունը առավելություն է ստանում փրկությունից, որը Հայրը կատարել է Իր Որդու մեջ (Հռովմ. 8:19-25):

Արդարացումը դա՝ Աստծո գթասիրտ գործողություն է, երբ Նա մեզ ներում է և մեղավորներին հաշտեցնում է Իր հետ: Արդարացումը նորից կվերադառնա Աստծո սիրուն, և այն տեղի է ունենում շնորհքով, հավատքի

միջոցով:

Արդարացումը դա՝ Աստծո փրկարար գործողություններից մեկն է: Երկրորդ առավելությունն այն է, որ Սուրբ Հոգին իրականում մնում է ապաշխարող մեղավորի մեջ, որպեսզի նրա մեջ սկսվի Աստծո կյանքը: Տղամարդը կամ կինը վերստին ծնվում են Աստծո Հոգու շնորհիվ: Նոր Կտակարանը հոգևոր կյանքի նոր սկիզբը անվանում է նոր արարած, վերստին ծնունդ, վերածնունդ, հավիտենական կյանք, մուտք Աստծո Արքայություն, քայլել նոր նորոգված կյանքով ինչպես նաև կյանք Սուրբ Հոգու մեջ:

Ինչ էլ որ այն մենք անվանենք, իրականում հրաշալի կերպով Սուրբ Հոգին Աստծո շնորհքով բնակվում է քրիստոնյաների մեջ և կատարում է փոխակերպում: Այնտեղ որտեղ կար մահ, հիմա կա կյանք, որտեղ կար պատերազմ, հիմա խաղաղություն Աստծո հետ, որտեղ կար հուսահատություն, այնտեղ հույս: Նոր Կտակարանը ասում է. «Ուրեմն ով որ Քրիստոսում է նոր ստեղծված է, հներն անցան, հիմա ամեն բան նոր է, բայց ամենն Աստվածանից է» (2 Կոր. 5:17-18ա):

Նոր Կտակարանը ասում է, որ քրիստոնյաները գտնվում են «Քրիստոսի մեջ» և Քրիստոսը նրանց մեջ: Մի կողմից, հիմա քրիստոնյաները հաշտված են Աստծո հետ, որովհետև նրանք հավատքով «Քրիստոսի մեջ են» (Հռովմ. 8:1), Նրանում, ով հաշտեցրել է ապաշխարած մեղավորներին Հոր հետ:

Բայց Նոր Կտակարանը նաև ասում է, որ Քրիստոսը մեր մեջ է որպես «փառքի հույս» (Կող. 1:27): Սուրբ Հոգու միջոցով, հարուցյալ Քրիստոսը փոխանցում է Իր կյանք և Իրեն, Իր ժողովրդին: Նա մնում է նրանց մեջ, և աճեցնում է Հոգու պտուղները (Գաղ. 5:22-23):

«Բայց իրականում որպես քրիստոնյա, ի՞նչ հոգևոր կյանք կարող եմ ակնկալել, - կհարցնեն շատերը: Արդյո՞ք հին, մեղավոր սովորությունները, չեն ստեղծել իմ կյանքի համր մոդել: Կամ Աստծո Հոգին իմ ներսում առաջարկում է ինձ ավելի՞ լավ կյանք»: Նոր Կտակարանը պատասխանում է. «Ավելի մեծ է Նա որ ձեզանում է, քան թե նա, որ աշխարհի մեջ է» (1Հովհ. 4:4):

Նույն ուժը, որ հարություն տվեց Հիսուս Քրիստոսին, դարձնելով Նրան մահին, դժոխքին և գերեզմանին Հաղթող, այժմ գործում է մեր մեջ Սուրբ Հոգու միջոցով (Եփ. 1:19): Մի ժամանակ տիրում էր մեղքի և մահվան հին օրենքը, բայց հիմա «Կյանքի հոգու օրենքը Հիսուս Քրիստոսում ազատեց ինձ մեղքի և մահվան օրենքից» (Հռովմ. 8:2):

Բոլոր քրիստոնյաների համար ուրախ չափանիշ է համարվում այն, որ նրանք լցված են Սուրբ Հոգով, և նրանք ապրում են ոչ թե մարմնով, այլ Հոգով (Հռովմ. 8:1-8): Ձեր կյանքում արդյո՞ք ունեցել եք Աստծո շնորհքի վերափոխող հրաշքը:

"The Miracle of Transforming Grace." Essay taken from, *The Reflecting God Study Bible® 2000.* Bible copyright by The Zondervan Corporation and Essay by Beacon Hill Press of Kansas City. Used by permission of Publisher. All rights reserved.


AΩ

ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՎԱՏՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված I
Սուրբ Երրորդություն

Մենք հավատում ենք Միակ, Հավիտենական, Ամենազոր Աստծուն, Տիեզերքի Արարչին ու Պահապանին: Նա է միակ Աստվածը, Նրա էությունը, հատկանիշները ու նպատակները սուրբ են: Աստված՝ Որը սուրբ սեր ու լույս է, Նա իր բնությունով Եռանձնյա էություն է, և մեզ բացահայտվեց, որպես Հայր, Որդի ու Սուրբ Հոգի:

Ծնն.դ.1, Ղևտ.19:2,Եր.Օր6:4-5, Ես.5:16; 6:1-7; 40:18-31,Մատթ3:16-17; 28:19-20, Հովհ.14:6-27, 1Կոր. 8:6, 2 Կոր. 13:14,Գաղ. 4:4-6,Եփ. 2:13-18, 1 Հովհ. 1:5; 4:8

Հոդված II
Հիսուս Քրիստոս

Մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին՝ Որը Սուրբ Երրորդության Երկրորդ Անձնավորությունն է: Մենք հավատում ենք, որ Նա Հոր հետ եղել է հավիտյան անբաժան, Նա մարդացավ Սուրբ Հոգու միջոցով և ծնվեց Կույս Մարիամից: Այսպիսով, երկու ամբողջական և կատարյալ էություններ՝ Աստվածայինը և մարդկայինը, ամբողջությամբ միավորվեցին մեկ Անձնավորության մեջ. Ճշմարիտ Աստված և ճշմարիտ մարդ, մարդ- Աստված:

Մենք հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսը մահացել է մեր մեղքերի համար և Նա իսկապես հարություն է առել մեռելներից և նորից ընդունելով Իր մարմինը՝ մարդկային կատարյալ էության ողջ հատկություններով, համբարձվել է երկինք և այնտեղ Աստծո առջև բարեխոսում է մեզ համար:

Մատթ. 1:20-25; 16:15-16, Ղուկ. 1:26-35, Հովհ. 1:1-18, Գործք 2:22-36, Հռ.8:3; 32-34, Գաղ. 4:4-5, Փիլ. 2:5-11, Կող. 1:12-22, 1 Տիմ. 6:14-16, Եբ. 1:1-5; 7:22-28; 9:24-28, 1 Հովհ. 1:1-3; 4:2-3, 15

Հոդված III
Սուրբ Հոգի

Մենք հավատում ենք Սուրբ Հոգուն, Որը Սուրբ Երրորդության Երրրորդ Անձնավորությունն է: Նա մշտապես ներկա է Քրիստոսի Եկեղեցու մեջ, գործում է այնտեղ ու Նրա միջոցով: Նա մերկացնում է աշխարհը իր մեղքի մեջ, վերածնում է նրանց, ովքեր հավատացել ու ապաշխարել են, սրբագործում է հավատացյալներին և առաջնորդում է նրանց ամեն ճշմարտության մեջ, որը կա Քրիստոսի մեջ:

Հովի. 7:39; 14:15-18, 26; 16:7-15, Գործք 2:33; 15:8-9,Հռ. 8:1-27, Գաղ. 3:1-14; 4:6, Եփ. 3:14-21; 1 Թես. 4:7-8; 2 Թես. 2:13; 1 Պետր. 1:2; 1 Հովի 3:24; 4:13

Հոդված IV
Սուրբ Գիրք

Մենք հավատում ենք, որ Սուրբ Գիրքը, որի տակ հասկանում ենք Հին և Նոր Կտակարանների 66 գրքերը, ամբողջությամբ ոգեշնչված են Աստծո Հոգով: Նրանք տրված են եղել Աստվածային ներշնչման միջոցով՝ առանց սխալի բացելով մեզ համար Աստծո կամքը այն ամենի վերաբերյալ, ինչ անհրաժեշտ է մեր փրկության համար: Հետևաբար, ինչ չի բովանդակում Սուրբ Գիրքը, չի կարող մեկնաբանվել որպես հավատքի դոգմա:

Ղուկ. 24:44-47, Հովի 10:35; 1 Կոր. 15:3-4; 2 Տիմ 3:15-17; 1 Պետ. 1:10-12; 2Պետ. 1:20-21

Հոդված V
Ադամական և անձնական մեղք

Մենք հավատում ենք, որ մեղքը և մեղքի պատճառով մահը, աշխարհ են մտել մեր նախահայրեր՝ Ադամի ու Եվայի անհնազանդության պատճառով: Մենք հավատում ենք, որ մեղքը ունի երկակի բնույթ՝ ադամական մեղք՝ որպես բարոյապես անկում ապրած բնություն և իրական՝ այսինքն անձնական մեղք:

Մենք հավատում ենք, որ ադամական մեղքը՝ որպես բարոյապես անկում

ապրած բնություն ամփոփվում է Ադամի յուրաքանչյուր սերնդի էության ապականվածության մեջ: Դրա հետևանքով ,ամեն մարդ հեռացել է սկզբնական արդարությունից ու անարատությունից, որ մեր նախահայրերը ունեին արարման պահին և հիմա գտնվում է Աստծո հետ հակասության մեջ, չունի հոգևոր կյանք և մշտապես հակված է դեպի չարը: Այնուհետև մենք հավատում ենք, որ ադամական մեղքը շարունակում է ազդել վերածնված մարդու նոր կյանքի վրա այնքան ժամանակ, մինչև որ հոգին չմաքրվի դրանից՝ Սուրբ Հոգու մկրտության միջոցով:

Մենք հավատում ենք, որ ադամական մեղքը տարբերվում է իրական մեղքից: Ադամական մեղքը, իրենից ներկայացնում է ժառանգական հակում դեպի իրական մեղքը: Այդ հակվածության համար մարդը պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, երբ նա մերժում կամ անտեսում է, այդ հակվածությունից ազատագրվելու համար՝ Աստծո կողմից առաջարկված միջոցները:

Մենք հավատում ենք, որ իրական կամ անձնական մեղքը, Աստծո Օրենքի գիտակցաբար խախտումն է մարդու կողմից, որը ի զորու է կրել բարոյական պատասխանատվություն: Իրական մեղքին չեն վերաբերվում ակամա կամ անխուսափելի թերությունները, տկարությունները, սխալները, բացթողումները կամ ուրիշ շեղումներ կատարյալ վարքի օրինակից, որոնք հանդիսանում են մեղսագործության մնացորդային հետևանք: Սակայն ,այդ

աննշան հետևանքները չպետք է ներառեն իրենց մեջ այնպիսի վերաբերմունք աշխարհին, կամ արձագանք տեղի ունեցող դեպքերին, որոնք հակասում են Քրիստոսի Հոգուն, հակառակ դեպքում, դրանք կարող ենք համարձակությամբ անվանել պիղծ ոգու մեղքեր:

Մենք հավատում ենք, որ անձնական մեղքը, ամենից առաջ Սիրո պատվիրանի խախտում է, իսկ Քրիստոսի նկատմամբ մեղքը կարելի է սահմանել որպես անհավատություն:

Ադամական մեղք: Ծնն.3; 6:5, Հոբ. 15:14, Սաղմոս 50:5, Եր. 17:9-10, Մարկ. 7:21-23, Հռ.1:18-25; 5:12-14, 7:1-8:9, 1Կոր. 3:1-4, Գաղ. 5:16-25;1 Հովհ. 1:7-8.
Անձնական մեղք: Մատթ. 22:36-40 և 1 Հովհ 3:4; Հովհ. 8: 34-36, 16:8-9, Հռ. 3:23; 6: 15-23; 8:18-24; 14:23; 1 Հովհ 1:9-2:4; 3:7-10

Հոդված VI
Քավություն

Մենք հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսը Իր տանջանքների, Իր արյունը թափելու և խաչի վրա Իր մահվան միջոցով կատարեց լիակատար քավություն ողջ մարդկային մեղքի համար, և այդ քավությունն է փրկության միակ հիմքը և այն բավարար է յուրաքանչյուր մարդու փրկության համար, որը սերվել է Ադամից: Աստծո շնորհքով այդ Քավությունը բավարար է նաև բոլոր այն մարդկանց փրկության համար, ովքեր ի վիճակի չեն բարոյական պատասխանատվություն կրել իրենց արարքների համար (հոգեկան խանգարում ունեցող մարդիկ, հղումը թարգմանիչինն է), ինչպես նաև անմեղ երեխաների փրկության համար: Բայց բոլոր նրանց համար, ովքեր հասել են սեփական պատասխանատվության հասակին, այդ Քավությունը ուժի մեջ է մտնում միայն նրանց ապաշխարության ու հավատքի պահին:

Ես. 53:5-6,11, Մարկ. 10:45, Ղուկ. 24:46-48, Հովհ. 1:29; 3:14-17, Գործք 4:10-12, Հռ.3:21-26; 4:17-25; 5:6-21; 1 Կոր. 6:20; 2Կոր. 5:14-21, Գաղ. 1:3-4; 3:13-14, Կող. 1:19-23; 1 Տիմ. 2:3-6, Տիտ. 2:11-14, Եբր. 2:9; 9:11-14; 13:12; 1 Պետր. 1:18-21; 2:19-25; 1Հովհ. 2:1-2

Հոդված VII
Նախնական շնորհք

Մենք հավատում ենք, որ մարդու արարումը Աստծո պատկերով ու նմանությամբ ներառում է բարու ու չարի միջև ընտրելու ունակություն, և այսպիսով ,մարդը օժտված էր բարոյական պատասխանատվություն կրելու ունակությամբ:

Մենք հավատում ենք, որ Ադամի մեղսագործության հետևանքով մարդը դարձավ այնքան վատաբարո ու ապականված, որ նա չի կարող դիմել Աստծուն ու հավատալ, անել ինչ որ բան վստահելով միայն իր սեփական ուժերին: Բայց մենք նաև հավատում ենք, որ Աստծո շնորհքը Հիսուս Քրիստոսում, ազատ շնորհված է բոլոր մարդկանց, այն հնարավորություն է տալիս բոլորին, ով ցանկանում է մեղքից դառնալ արդարության, հավատալ Հիսուս Քրիստոսին, ստանալ ներում և մաքրվել մեղքերից, ինչպես նաև կատարել բարի գործեր՝ Նրա տեսակետին հաճելի ու բարենպաստ:

Մենք հավատում ենք, որ նույնիսկ վերստին ծնունդը վերապրած և

լիակատար սրբագործության փորձը ունեցող մարդը, կարող է ընկնել շնորհքից և հրաժարվել Աստծուց և եթե նա չապաշխարի իր մեղքից, անհույս ու հավիտյան կորած կլինի:

Աստծո պատկերը և նմանությունը մարդու մեջ և նրա բարոյական պատասխանատվությունը: Ծնն. 1:26-27; 2:16-17, Երկր. Օր. 28:1-2; 30:19, Հեսու. 24:15, Սաղմոս 8:3-5, Ես. 1:8-10, Երեմ. 31:29-30, Եզեկ. 18:1-4, Միքիա 6:8, Հռ. 1:19-20; 2:1-16; 14:7-12,Գաղ. 6:7-8
Մարդու բնական անզորությունը: Հոբ14:4; 15:14; Սաղմոս 14:1-4, 50:5, Հովհ. 3:6ա, Հռ. 3:10-12, 5:12-14, 20ա; 7:14-25
Շնորհքի պարգևը և հավատքի գործերը: Եզ. 18:25-26, Հովհ. 1:12-13; 3:6ճ, Գործք 5:31, Հռ. 5:6-8, 18; 6:15-16, 23; 10:6-8; 11:22; 1 Կոր. 2:9-14; 10:1-12; 2 Կոր. 5:18-19, Գաղ. 5:6, Եփ. 2:8-10, Փիլ. 2:12-13, Կող. 1:21-23; 2 Տիմ. 4:10ա, Տիտ. 2:11-14, Եբր. 2:1-3; 3:12-15; 6:4-6; 10:26-31, Հակ. 2:18-22; 2 Պետր. 1:10-11; 2:20-22

Հոդված VIII
Ապաշխարություն

Մենք հավատում ենք, որ ապաշխարությունը հանդիսանում է մեղքի հանդեպ մտածելակերպի անկեղծ ու լիակատար փոփոխություն և այն իր մեջ ներառում է անձնական մեղքի գիտակցություն և կամավոր հրաժարում բոլոր տեսակի մեղքերից: Այն անհրաժեշտ է բոլորին, ով իր արարքներով կամ դիտավորություններով մեղանչել է Աստծո առաջ: Աստծո Հոգին բոլոր ապաշխարողներին տալիս է շնորհալի օգնություն, որպեսզի սրտում ունենան ճշմարիտ ապաշխարություն և Աստծո ողորմության հույս, որով կարող են հավատալ, ստանալ ներում և հոգևոր կյանք:

2 Մն. 7:14, Սաղ. 31:5-6; 51:1-17, Ես. 55:6-7, Եր. 3:12-14, Եզ. 18:30-32; 33:14-16, Մարկ. 1:14-15, Ղուկ. 3:1-14; 13:1-5; 18:9-14,Գործք 2:38; 3:19; 5:31; 17:30-31; 26:16-18, Հռ. 2:4; 2 Կոր 7:8-11; 1 Թես. 1:9; 2 Պետր. 3:9

Հոդված IX
Արդարացում, վերածնունդ, որդեգրում

Մենք հավատում ենք, որ արդարացումը Աստծո արդարության բարեշնորհ գործողություն է, որի միջոցով Նա լիովին ներում է հանցանքը և ազատագրում կատարված մեղքի պատժից, ինչպես նաև ընդունում և ճանաչում է բոլորին արդար, ով հավատացել է Հիսուս Քրիստոսին և ընդունել է Նրան որպես Տեր ու Փրկիչ:

Մենք հավատում ենք, որ վերածնունդը կամ վերստին ծնունդը Աստծո բարեշնորհ գործողություն է, որի միջոցով ապաշխարող մարդու բարոյական էությունը հոգևորապես վերափոխվում է և նրան նվիրվում է նոր հոգևոր կյանք, երբ նա ընդունակ է դառնում հավատալու, սիրելու և լինելու հնազանդության մեջ:

Մենք հավատում ենք, որ որդեգրումը Աստծո բարեշնորհ գործողություն է, որի միջոցով արդարացված և վերածնված հավատացյալը դառնում է Աստծո զավակ:

Մենք հավատում ենք, որ Աստծուն փնտրող մարդը միաժամանակ ստանում է արդարացում, վերածնունդ և որդեգրում և նրանք ձեռք են բերվում հավատք ունենալու պայմանով, որը նախորդում է ապաշխարությանը, Սուրբ Հոգին հավատացյալին վկայում է այդ բարեշնորհ վիճակի մասին:

Ղուկ. 18:14, Հովհ. 1:12-13; 3:3-8; 5:24,Գործք.13:39, Հռ. 1:17; 3:21-26, 28; 4:5-9, 17-25; 5:1, 16-19; 6:4; 7:6; 8:1, 15-17; 1 Կոր. 1:30; 6:11; 2 Կոր. 5:17-21, Գաղ. 2:16-21; 3:1-14, 26; 4:4-7, Եփ. 1:6-7; 2:1, 4-5, Փիլ. 3:3-9, Կող. 2:13, Տիտ. 3:4-7; 1 Պետր. 1:23; 1 Հովհ. 1:9, 3:1-2,9; 4:7; 5:1, 9-13, 18

Հոդված X
Քրիստոնեական սրբություն և լիակատար սրբագործում

Մենք հավատում ենք, որ սրբագործումը Աստծո գործողությունն է, որը հավատացյալին վերափոխում ու դարձնում է Քրիստոսի նման: Այն իրագործվում է Աստծո շնորհիքով և Սուրբ Հոգու միջոցով, նախնական սրբագործման, կամ վերստին ծնունդի (միաժամանակ արդարացման հետ), լիակատար սրբագործման պահին և այն Սուրբ Հոգու շարունակվող գործողություն է, որը ավարտվում է մինչ փառավորվելու պահը (մահվանից հետո, հղումը թարգմանիչինն է): Փառավորված վիճակում մենք լիովին համապատասխանում ենք Որդու պատկերին:

Մենք հավատում ենք, որ լիակատար սրբագործումը Աստծո գործողությունն է, որը հետևում է վերստին ծնդից հետո և որի միջոցով հավատացյալը ազատագրվում է ադամական մեղքից, կամ բարոյական ապականությունից, մտնում է Աստծուն լիակատար նվիրվածության դիրքի մեջ, դեպի սուրբ հնազանդություն և կատարյալ սեր:

Լիակատար սրբագործումը տեղի է ունենում Սուրբ Հոգով մկրտվելու կամ լցվելու միջոցով, որը ընկալվում է մարդու կողմից, որպես սրտի մաքրվելը մեղքից, և նրա մեջ Սուրբ Հոգու մշտական ներկայությունը, Որը հավատացյալին տալիս է ուժ՝ կյանքի ու ծառայության համար:

Լիակատար սրբագործումը շնորհվում է Հիսուսի արյան շնորհիվ, այն իրագործվում է ակնթարթորեն հավատքի միջոցով, նրան նախորդում է լիակատար նվիրվածությունը: Սուրբ Հոգին վկայում է հավատացյալին այդ գործողության և շնորհքի առկայության մասին:

Այդ հոգևոր փորձառությունը և նրա տարբեր փուլերը կարելի է անվանել տարբեր խոսքերով, ինչպես «քրիստոնեական կատարելություն», «կատարյալ սեր», «սրտի մաքրություն», «Սուրբ Հոգու մկրտություն կամ լեցունություն», «լիակատար օրհնություն», «քրիստոնական սրբություն»:

Մենք հավատում ենք, որ գոյություն ունի բացահայտ տարբերություն սրտի մաքրության և մարդու հոգևոր հասունության միջև: Սրտի մաքրությունը տեղի է ունենում ակնթարթորեն և հանդիսանում է լիակատար սրբագործման հետևանք, իսկ հոգևոր հասունությունը շնորհքով հասունանալու արդյունք է:

Մենք հավատում ենք, որ լիակատար սրբագործման շնորհքը ընդգրկում է իր մեջ Աստծուց մղում, դեպի շնորհքի մեջ հասունության, ինչպես աշակերտները Քրիստոսի նման: Սակայն այդ մղմանը անհրաժեշտ է գիտակցված համագործակցություն և հատուկ ուշադրություն է պետք հատկացնել նրան, ինչ պահանջվում է հոգևոր աճի ընթացքի և Քրիստոսին նմանվելու համար, ընդգրկելով մեր անձնական հատկանիշներն ու բնավորությունը: Հավատացյալի կողմից առանց նպատակասլաց ջանքերի, նրա վկայությունը կարող է կորցնի իր ուժը և շնորհքը չի գործի: Արդյունքում հավատացյալը կարող է շնորհքը կորցնել:

Մասնակցելով նրանցում՝ որ անվանվում են շնորհքի միջոցներ, հատկապես հաղորդակցվելով, մասնակցելով Եկեղեցական ծիսակատարություններում, հավատացյալները ամբողջ սրտով աճում են շնորհքի և սիրո մեջ, դեպի Աստված և դեպի մերձավորը:

Եր. 31:31-34, Եզ. 36:25-27, Մալ. 3:2-3, Մատթ. 3:11-12, Ղուկ. 3:16-17, Հովհ. 7:37-39; 14:15-23; 17:6-20, Գործք 1:5; 2:1-4; 15:8-9, Հռ. 6:11-13,19; 8:1-4,8-14; 12:1-2; 2 Կոր. 6:14-7:1, Գաղ. 2:20; 5:16-25; Եփ. 3:14-21; 5:17-18, 25-27, Փիլ. 3:10-15, Կող.3:1-17; 1 Թես. 5:23-24, Եբր. 4:9-11; 10:10-17; 12:1-2; 13:12; 1 Հովհ 1:7,9

«Քրիստոնեական կատարելություն», «Կատարյալ Սեր»: Երկ. Օր. 30:6, Մատթ. 5:43-48; 22:37-40,

Հռ. 12:9-21; 13:8-10; 1 Կոր. 13, Փիլ. 3:10-15, Եբր. 6:1; 1 Հովհ. 4:17-18.
«Սրտի մաքրություն»: Մատթ. 5:8, Գործք 15:8-9; 1 Պետր. 1:22; 1 Հովհ 3:3.
«Սուրբ Հոգու Մկրտություն»: Եր. 31:31-34, Եզ. 36:25-27, Մաղ. 3:2-3, Մատթ. 3:11-12, Ղուկ. 3:16-17, Գործք 1:5; 2:1-4; 15:8-9.
«Լիակատար օրհնություն»: Հռ. 15:29.
«Քրիստոնեական Սրբություն»: Մատթ.5:1-7:29, Հովհ. 15:1-11, Հռ.12:1-15:3; 2 Կոր. 7:1, Եփ. 4:17-5:20, Փիլ. 1:9-11; 3:12-15, Կող. 2:20-3:17; 1 Թես. 3:13; 4:7-8; 5:23; 2 Տիմ. 2:19-22, Եբր. 10:19-25; 12:14; 13:20-21; 1 Պետր. 1:15-16; 2 Պետր. 1:1-11; 3:18, Հուդա 20-21.

Հոդված XI
Եկեղեցի

Մենք հավատում ենք Եկեղեցուն, նրանց հաղորդակցությանը, ովքեր դավանում են Հիսուս Քրիստոսին որպես՝ Տիրոջ: Նրանք Աստծո ուխտի ժողովուրդ են, նոր արարածներ Քրիստոսի մեջ, Քրիստոսի մարմինը՝ Սուրբ Հոգուց կանչված Խոսքի միջոցով:

Աստված Եկեղեցուն կոչ է անում գործել միաբանությամբ և Սուրբ Հոգու հաղորդակցությամբ, Աստծուն երկրպագելով և Նրան փառաբանելով Խոսքի քարոզչությամբ, խորհուրդները պահպանելով, ծառայելով հանուն Նրա, հնազանդվելով Քրիստոսին, սրբության կյանքով, որը ներառում է փոխադարձ պատասխանատվություն մեկը- մյուսի նկատմամբ:

Եկեղեցու առաքելությունը աշխարհում հանդիսանում է Քրիստոսի ծառայության շարունակություն, որպես Սուրբ Հոգու զորությամբ փրկագնելու ու հաշտեցնելու : Եկեղեցին իրագործում է իր առաքելությունը պատրաստելով աշակերտներ, ավետարանչության, կրթության, գթասրտության, արդարության վերականգման և Աստծո Արքայության մասին վկայելու միջոցներով:

Եկեղեցին՝ դա պատմական իրականություն է, որը կազմակերպչական գործերում օգտագործում է այն ձևերը, որոնք հատուկ են տեղի մշակույթին: Այն գոյություն ունի, որպես տեղական Եկեղեցի, ինչպես նաև որպես Քրիստոսի տիեզերական Եկեղեցի: Եկեղեցին ընտրում է այն մարդկանց, ում Աստված կանչել է հատուկ ծառայության: Աստված Եկեղեցուն կոչ է անում ապրելու իր Գերիշխանության տակ, Իր պատվիրաններին հնազանդ և սպասելով ամեն ինչի վերջանալուն, այն օրվան՝ երբ մեր Տեր Հիսուս Քրիստոսը կվերադառնա:

Ելից 19:3, Եր.31:33, Մատթ. 8:11; 10:7; 16:13-19, 24; 18:15-20; 28:19-20, Հովհ. 17:14-26; 20:21-23, Գործք 1:7-8; 2:32-47; 6:1-2; 13:1; 14:23, Հռ. 2:28-29; 4:16; 10:9-15; 11:13-32; 12:1-8; 15:1-3; 1 Կոր. 3:5-9; 7:17; 11:1,17-33; 12:3, 12-31; 14:26-40; 2 Կոր. 5:11-6:1, Գաղ. 5:6, 13-14, 6:1-5, 15, Եփ. 4:1-17; 5:25-27, Փիլ. 2:1-16; 1 Թես. 4:1-12; 1 Տիմ. 4:13, Եբր. 10:19-25; 1 Պետր 1:1-2, 13; 2:4-12,21; 4:1-2,10-11; 1 Հովհ. 4:17, Հուդա 24, Հայտն. 5:9-10

Հոդված XII
Մկրտություն

Մենք հավատում ենք, որ քրիստոնեական մկրտությունը, որ պատվիրել է մեր Տերը, խորհուրդ է, որը նշանակում է Հիսուս Քրիստոսի կողմից կատարված քավության ընդունում: Մկրտության հնարավորություն տրվում է բոլոր հավատացյալներին և այն հանդիսանում է նրանց հավատքի արտահայտությունը Հիսուս Քրիստոսին՝ որպես Փրկչի, ինչպես նաև ցանկություն լիովին հնազանդվելու Նրան, սրբությամբ ու արդարությամբ:

Քանի որ մկրտությունը հանդիսանում է Նոր Կտակարանի խորհրդանիշ, փոքր երեխաների մկրտությունը հնարավոր է ծնողների կամ խնամակալների խնդրանքով, որոնք պարտավոր են տալ խոստում, դաստիարակելու երեխային քրիստոնեական հավատքի մեջ:

Մկրտությունը կատարվում է մկրտվողի ցանկության համապատասխան՝ ցողելու, ջրելու կամ ջրում ամբողջապես ընկղմվելու միջոցով:

Մատթ. 3:1-7; 28:16-20, Գործք 2:37-41; 8:35-39; 10:44-48; 16:29-34; 19:1-6; Հռ. 6:3-4, Գաղ. 3:26-28, Կող. 2:12; 1 Պետր. 3:18-22

Հոդված XIII
Տերունական Ընթրիք

Մենք հավատում ենք, որ Տերունական Ընթրիքը հաստատվել է մեր Տեր ու Փրկիչ, Հիսուս Քրիստոսի կողմից և ըստ էության հանդիսանում է Նոր Կտակարանային խորհուրդ, որն ազդարարում է Նրա անձնազոհ մահը, ըստ որի, հավատացյալները Քրիստոսում ունեն փրկություն, կյանք և բոլոր հոգևոր օրհնությունների խոստում: Տերունական Ընթրիքը նախատեսված է նրանց համար, ովքեր պատրաստ են ակնածանքով գնահատելու նրա նշանակությունը և «ավետելու Տիրոջ մահը,

մինչև Նա կգա»: Քանի որ Տերունական Ընթրիքը հավատացյալների հաղորդություն է, նրանում հրավիրվում են մասնակցելու միայն նրանք, ովքեր հավատում են Հիսուս Քրիստոսին և ունեն եղբայրական սեր դեպի բոլոր սրբերը:

Ելից 12:1-14, Մատթ. 26:26-29, Մարկ. 14:22-25, Ղուկ. 22:17-20, Հովհ. 6:28-58; 1 Կոր 10:14-21; 11:23-32

Հոդված XIV
Աստվածային բժշկություն

Մենք հավատում ենք Աստվածային բժշկության Աստվածաշնչյան ուսմունքին, ուստի առաջարկում ենք մեր Եկեղեցու անդամներին հավատքով աղոթել հիվանդների բժշկության համար: Նաև մենք հավատում ենք, որ Աստված բժշկում է ժամանակակից բժշկական գիտությունների միջոցով:

4 Թագ. 5:1-19, Սաղ 103:1-5, Մատթ. 4:23-24; 9:18-35, Հովհ 4:46-54, Գործք5:12-16; 9:32-42; 14:8-15; 1 Կոր. 12:4-11; 2 Կոր. 12:7-10, Հակ. 5:13-16

Հոդված XV
Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստ

Մենք հավատում ենք, որ Տեր Հիսուս Քրիստոսը կվերադառնա: Նրա վերադարձի ժամանակ առաջինը հարություն կառնեն Քրիստոսով մահացածները, հետո նրանք, ովքեր կենդանի են, եթե լինեն Նրա մեջ, կհափշտակվեն նրանց հետ ու կհանդիպեն Տիրոջը օդում, որպեսզի միշտ լինեն Նրա հետ:

Մատթ. 25:31-46, Հովհ. 14:1-3, Գործք 1:9-11, Փիլ. 3:20-21; 1 Թես.4:13-18, Տիտ. 2:11-14, Եբր. 9:26-28; 2 Պետր. 3:3-15, Հայտն. 1:7-8; 7-20

Հոդված XVI
Հարություն, դատ և հավիտենական կյանք

Մենք հավատում ենք, մեռելների հարությանը, դա նշանակում է, որ ինչպես արդարների, այնպես էլ

անարդարների մարմինները հարություն կառնեն և կմիանան իրենց հոգիներին «Եվ դուրս կգնան նրանք, որ բարի են գործել դեպի կյանքի հարություն, և նրանք որ չար են արել՝ դեպի դատաստանի հարության»:

Մենք հավատում ենք գալիք դատաստանին, որի ժամանակ ամեն մարդ կկանգնի Աստծո առաջ և կդատվի համապատասխան իրեն գործերի, որոնք նա կատարել է իր կյանքի ընթացքում:

Մենք հավատում ենք, որ բոլոր նրանք, ովքեր հավատացել են Հիսուս Քրիստոսին՝ փրկության համար և խոնարհությամբ հետևում են մեր Տիրոջը, պատրաստված է փառավոր ու հավիտենական կյանք: Մինչև վերջ չապաշխարածները հավիտյան կտառապեն դժոխքում:

Ծնն. 18:25; 1 Թագ. 2:10, Սաղ. 49:6, Ես. 26:19, Դան. 12:2-3; Մատթ. 25:31-46, Մարկ. 9:43-48, Ղուկ. 16:19-31; 20:27-38, Հովհ.3:16-18; 5:25-29, 11:21-27, Գործք 17:30-31, Հռ. 2:1-16; 14:7-12; 1 Կոր. 15:12-58; 2 Կոր. 5:10; 2 Թես. 1:5-10, Հայտն. 20:11-15; 22:1-15

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵՆՔ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻ ՄԱՍՆԻԿՆ ԵՆՔ

«Եկեղեցին» խոսք է, որը երբեմն դժվար է հասկանալ: Քանի որ մենք, տարբեր իրավիճակներում օգտագործում ենք այդ խոսքը, մեզ անհրաժեշտ է տալ սահմանում, օգտագործելով ճշգրիտ տերմիններ: Դա կոչվում է «էկլեզիոլոգիա», այսինքն «եկեղեցու ուսումնասիրություն»

Նախ և առաջ Նազովրեցու Եկեղեցին իրեն նույնականացնում է նրանց հետ, ում Աստվածաշունչն անվանում է «Աստծո ժողովուրդ»: Ավելի ճիշտ կարելի է ասել, մենք «մեկ, սուրբ, տիեզերական, առաքելական եկեղեցու» մի մասնիկն ենք: Այս արտահայտությունը վերցված է հավատքի վաղ հանգանակությունից, որին քրիստոնյաները պատմության ամբողջ ընթացքում և ամբողջ աշխարհում հավատում են դրան: Այս արտահայտության չորս բառերից ամեն մեկը նկարագրում է «եկեղեցու» կարևոր ասպեկտները:

Մենք մկրտվում ենք ոչ թե Նազովրեցու Եկեղեցում, այլ «Քրիստոսի Եկեղեցում»: Մեր մկրտությունը դա անհատական և հրապարակային գործողություն է, որով մենք տեսնում ենք Աստծո շնորհքի գործողությունները: Նրա նախնական և փրկարար շնորհքներով Աստված

գործել է մեր կյանքում, մինչ Նրան ճանաչելը:

Մեր ծառայողները ձեռնադրված են ոչ թե Նազովրեցու Եկեղեցում, այլ «Աստծո Եկեղեցում»: Այսպիսով մեր նազովրեցի համայնքները հանդիսանում են «տիեզերական եկեղեցու» մի մասնիկը և այդ արտահայտությունը մենք օգտագործում ենք, որպեսզի նկարագրենք պատմության ողջ ընթացքում աշխարհի բոլոր հավատացյալների ընդհանրականության ժողովը:

Մենք հավատում ենք Աստծո և Նրա Եկեղեցու սրբության աստվածաշնչյան սահմանմանը: Աստված ընտրել է Եկեղեցուն դառնալու Իր Աստվածային շնորհքի գործիքը և Նա իրականացրել է նրա գոյությունը Սուրբ Հոգու միջոցով: Սուրբ Հոգին Եկեղեցու կյանքն ու ուժն է, և Նա դարձնում է նրան Քրիստոսի կենդանի մարմինը այս աշխարհում: Քրիստոնեական եկեղեցին վկայում է այն ճշմարտության մասին, որ Աստծուն երկրպագելը մարդու կյանքի միակ ճշմարիտ նպատակն է: Այդ պատճառով եկեղեցին կոչ է անում մարդկանց ապաշխարել և փոխել իրենց կյանքերը: Նա սնում է հավատցյալներին համայնքային կյանքի ամբողջության միջոցով և կոչ է անում նրանց սրբության, այսինքն՝ ունենալ Քրիստոսի նման կյանք: Իր հավատարմության և սրբության միջոցով, եկեղեցին ներկայացնում է այս աշխարհին Աստծո Արքայությունը: Իսկապես եկեղեցին հանդիսանում է իր լուրի չափորոշիչը:

Մենք կատարում ենք Աստծո միսիան

Աստված ստեղծել է հսկայական մասշտաբի տիեզերք: Բնության մեջ և ամբողջ պատմության ընթացում, Նա ստեղծում է մարդկանց Իր պատկերով, որպեսզի Աստվածային սերը կարողանա ծաղկի: Այս աշխարհում Աստված ունի Իր միսիան, իսկ մենք ստանում ենք այդ միսիան Իրենից: Երբ մեղքը ավերեց արարված աշխարհը, այն ժամանակ արտահայտվեց այդ միսիայի փրկագնող բնությունը: Այդ միսիան կայանում է «վերականգնելու ամբողջ արարչագործությունը այն նպատակների համար, որոնք Աստված ուներ արարման պահին»:[2] Մարդկության վերականգնումը հանդիսանում է Աստծո միսիայի հիմնական մասը:

2 Roger L. Hahn, “The Mission of God in Jesus’ Teaching on the Kingdom of God,” in Keith Schwanz and Joseph Coleson, eds., Missio Dei: A Wesleyan Understanding (2011), 58.

Ջոն Վեսլին սահմանեց այդ վերականգնում, որպես սրբագործում: Խոսելով նրա բառերով, դա «մեր հոգու թարմացումն է Աստծո պատկերի նմանությամբ», որը նա բնութագրեց, որպես «արդարություն և ճշմարիտ սրբություն»:[3] Աստծո միսիան արտացոլված է Աբրահամի կանչի մեջ, որին Նա ընտրեց, որպեսզին օրհնի, որպեսզի Աբրահամի սերունդները կարողանան դառնալ «օրհնություն բոլոր ազգերի համար» (Ծննդոց 12:1-3): Դա արտահայտվեց հրեաների պատմության մեջ, որոնք վկայում էին միակ Աստծո մասին, որի անունը նրանք հռչակում էին աշխարհի բոլոր ազգերի մեջ:

Քրիստոնյաները Աստծուն գիտեն, որպես Սուրբ Երրորդություն, երեք անձնավորություններ մեկում, և ավելի ամբողջական այն արտահայտված է Մեր Տեր Հիսուս Քրիստոսում: Սուրբ Հոգին հրավիրում է մեզ մասնակցելու Աստծո միսիայում, տալով մեզ ուժ անելու այն: Եկեղեցին մտնում է ուխտի մեջ, որը առաջին անգամ Աստված կապել էր Աբրահամի հետ: Եկեղեցու սրբագործված կյանքի մի մասնիկն է կազմում այն, որ եկեղեցին մնում է որպես օրհնություն բոլոր ազգերի համար:

Մենք միաբանվում ենք Աստծո միսիայի ուրիշ քրիստոնյաների հետ, բայց մենք խստորեն հավատարիմ ենք մեր տեսիլքին, որպես միջազգային հարանվանություն, հետևելով այն կարգին, որը համապատասխանում է մեր ապրելակերպին: Ազգային սահմանները չեն սահմանափակում եկեղեցին, որովհետև Քրիստոսը բացել է դրանք բոլոր ազգերի և ռասսաների համար:

Այս աշխարհում ծառայում ենք Քրիստոսի նման

Քրիստոնեական ծառայության հիմքը հանդիսանում է Աստծո սիրո մասին վկայելու աստվածաշնչյան պատվիրանը, սիրո մասին, որը առավել տեսանելի է Հիսուսի անձի մեջ: Հավատացյալները սկսում են այդ ծառայությունը երբ նրանք մկրտվում են: Այդ պահին, որպես Քրիստոսի աշակերտներ, նրանք հայտարարում են, այս աշխարհում վկաներ լինելու իրենց մտադրության մասին: Ճշմարիտ աշակերտությունը, դա Աստծո ներքին շնորհքի արտաքին նշանն է մեր մեջ: Նաև այն այս աշխարհում Աստծո շնորհքի գործողության նշանն է, որն է «Աստված այնպես սիրեց..» (Հովհ. 3:16): Որպես Քրիստոսի մարմնի անդամներ, բոլոր

[3] John Wesley, Sermons, Volume II (1902), p. 373; John Wesley, A Plain Account of Christian Perfection, in J. A. Wood, Christian Perfection as Taught by John Wesley (1885), 211.

հավատացյալները ծառայության համար զինված են: Ոմանք եկեղեցում կանչված են լինելու որպես հատուկ առաջնորդներ, և եկեղեցին ձեռնադրում է նրանց որպես առաքելական ծառայողների: Այսինքն, մենք կարող ենք ասել, որ եկեղեցին նրանց ընդունում է, որպես առաջնորդների, որոնք շարունակում են առաքյալների սկսած աշխատանքը: Նրանց կանչը ամբողջապես արմատացած է նրանց Աստծո անձնական ճանաչողության մեջ:

Քահանայությունը միասին (նրանք, որոնք ձեռնադրվել են որպես ծառայող) և հաճախողները (բոլոր մնացած հավատացյալները) տարբերում և ընդունում են Քրիստոսի մարմնի անդամների պարգևները և շնորհքները: Ամենից առաջ դա տեղի է ունենում տեղական եկեղեցում, հետո տարեկան տարածաշրջանային ժողովի կամ ասամբլեայի ժամանակ, որտեղ հավաքվում են տարածաշրջանի եկեղեցիները միասին, որպեսզի աջակցեն մեկը մյուսին և հարանվանության աշխատանքը, նրանք ընտրում են նրանց, ովքեր կձեռնադրվեն որպես ծառայողներ: Սարկավագները, դրանք այն մարդիկ են, որոնք կանչված են և ձեռնադրված ծառայելու այնտեղ, որտեղ քարոզը և խորհուրդները չեն հանդիսանում նրանց հիմնական պատասխանատվությունը: Երեցները ձեռնադրվում են նրա համար, որպեսզի ձևավորեն Քրիստոսի մարմինը, քարոզելով Ավետարան, կատարելով խորհուրդներ, աճեցնելով մարդկանց փառաբանության միջոցով, ինչպես նաև պահպանելով համայնքի կյանքում կարգ ու կանոնը:

Սուպերինտենդենտները ընտրվում են տարածաշրջանում կամ ծառայելու համաշխարհային գրասենյակում հաճախողների և քահանաների ասամբլեաներում: Տարածաշրջանային սուպերինտենդենտները համարվում են կոնկրետ տարածաշրջանի եկեղեցիների, անդամների և քահանաների համար հոգևոր առաջնորդներ և հովիվներ: Գլխավոր սուպերինտենդենտները կատարում են առաքելական և հովվական ծառայություններ ամբողջ հարանվանության համար, աջակցելով եկեղեցու միաբանությունը ուսմունքում և սրբության մեջ: Նրանք բոլորը միասին հետևում են Քրիստոսի կյանքի մոդելին և փոխանցում են տեսիլքը, որին հետևում է ամբողջ եկեղեցին:

Բոլոր հարցերը նրանք պետք է վերլուծեն միջազգային տեսակետից ելնելով: Նրանք պետք է պատմեն տեսիլքի մասին, թե ինչ անհրաժեշտ ռեսուրսներ են հարկավոր եկեղեցու մարմնի տարբեր մասերի համար, մասնակցելու մեր համաշխարհային ծառայության կարիքավոր շրջաններում

ռեսուրսների բաշխման գործին, և միաբանել եկեղեցին իր միսիայի և իր լուրի շուրջը: Ծառայողների ձեռնադրման միջոցով, տարբեր շրջանային ասամբլեաներում նրանք պահպանում են հարանվանության միաբանությունը այնպիսի հսկա զանազանության մեջ, ինչպիսիք են՝ ազգայինը, տնտեսականը, ռասսայականը և լեզվականը:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԸ

Նազովրեցիները միշտ ընդունել են, որ մենք ներկայացնում ենք տիեզերական եկեղեցու գոյության եղանակներից միայն մեկը: Մենք հավատում ենք, որ Աստվածաշնչում ներկայացված չէ եկեղեցու կառավարման որոշակի մոդել, և մեր կառավարման ձևը կարող է ձևավորվել ընդհանուր համաձայնության հիմքի վրա, և այն, ինչ օգտագործվում է մեր կողմից, չի հակասում Աստվածաշնչին: Այն պատճառով, մենք հավատում ենք , որ մեր նպատակները մեր միսիան պետք է ձևավորի մեր կառուցվածքը: (Հետագա տեղեկատվություն ստանալու համար, տես «Պատմական ակնարկը» *Նազովրեցու Եկեղեցու Ղեկցույցից*):

Նազովրեցու Եկեղեցին իր համար ընդունում է պատմական եղանակով ձևավորված, եկեղեցու կառավարման դեմոկրատական տարբերակը (որը կոչվում է «եպիսկոպոսական, մեթոդիստական կառավարման ձև»): Մենք ընդլայնեցինք քահանաների և այցելուների իրավունքները և սահմանափակեցինք եպիսկոպոսի իրավունքները, դրա փոխարեն նախընտրելով սուպերինտենդենտների ընտրությունը:

Ահա Նազովրեցու Եկեղեցու կառավարման հիմնական էլեմենտները.

- Մենք ունենք կառավարման երեք մակարդակ.
- Գլխավոր ասամբլեան ընտրում է գլխավոր սուպերինտենդենտներին, որոնք ուղղորդում են հարանվանության ծառայությունը համաշխարհային մակարդակով և ղեկավարում են ամբողջ եկեղեցին:

Նրանք ծառայում են մեկ գլխավոր ասամբլեայի պահից միչև հետևյալը և պետք է վերաընտրվեն ամեն ասամբլեայի ժամանակ: Ամեն գլխավոր սուպերինտենդենտ պատասխանում է որոշակի տարածաշրջանների ցուցակի համար, որտեղ անցկացվում են տարածաշրջանային ասամբլեաներ, ձեռնադրվում են նոր ծառայողներ և այն մտնում է նրա պատասխանատվության ոլորտի մեջ: Գլխավոր սուպերինտենդենտների քանակը, ժամանակի ընթացքում տարբեր է եղել, բայց 1960 թվականից նրանց թիվը մնում է հավասար վեցի: Նրանք համատեղ ձևավորում են Գլխավոր սուպերինտենդետների Խորհուրդը, որը հանդիպում է տարին մի քանի անգամ:

- Գլխավոր ասամբլեան ընտրում է Գլխավոր Խորհուրդը, որը բաղկացած է քահանաների և այցելուների հավասար թվից: Այն հանդիպում է ամեն տարի և ընտրում է կառավարման անդամներին և բաժինների տնօրեններին: Այն նաև նախատեսում է կառավարման կանոնները, բյուջեն և թե ինչպես է տեղի ունենում եկեղեցու ծառայությունը աշխարհում:
- Տեղում եկեղեցիները համախմբված են շրջաններում և նրանց ղեկավարում են սուպերինտենդենտները: Շրջանային մակարդակով եկեղեցին կազմակերպված է միսիոներական նպատակներով, և ամեն տարի հանդիպում է շրջանային ասամբլեաների ժամանակ: Շրջանային ասամբլեան ընտրում է շրջանային սուպերինտենդենտին, որի պատասխանատվությունների մեջ է մտնում եկեղեցիների և հովիվների աջակցությունը, նոր եկեղեցիների հաստատումը, շրջանում առողջ մթնոլորտի պահպանումը:
- Եկեղեցիները կոչ են անում ծառայության իրենց հովիվներին, սուպերինտենդենտի հետ խորհրդակցելուց և նրա հավանությունը ստանալուց հետո: Նրանք իրենք են կառավարում իրենց ֆինանսները և գործերը:
- Ամբողջ աշխարհում Նազովրեցու շրջանները համախմբված են տարածաշրջանների մեջ: Այս պահին կան վեց տարածաշրջաններ. Աֆրիկա, Ասիական- Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, Եվրասիա, Կենտրոնական Ամերիկյան տարածաշրջան, Հարավային Ամերիկա և ԱՄՆ, և Կանադա տարածաշրջան: Համաշխարհային տարածաշրջանները ստեղծված են այնպես, որ իրականացվի եկեղեցու միսիան: Նրանք կառավարման ձևի մաս չեն հանդիսանում:
- Եկեղեցական շենքերը հանդիսանում են շրջանի սեփականությունը,

բայց դրանք կառավարում են համայնքները:

- Ինչպես տղամարդիկ այնպես էլ կանայք, եկեղեցում կարող են ծառայել եկեղեցու տարբեր ծառայություններում, ինչպես քահանաներ և որպես այցելուներ:
- Մեր կարևոր փաստաթղթերն են կառավարման կառուցվածքը և կառավարման ձևը, որոնք հավաքված են Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցում: Ողեցույցում փոփոխությունները կատարում է Գլխավոր Ասամբլեան:

ԵԿԵՂԵՑԻ

ՏԵՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Նազովրեցու Եկեղեցին ուզում է, որ բոլոր մարդիկ Սուրբ Հոգու զորությունով, փորձեին Աստծո փոխակերպող շնորհքի գործողությունը, Հիսուս Քրիստոսում մեղքերի ներման և սրտի մաքրման միջոցով:

Մեր հիմնական միսիան է. «Դաստիարակել Քրիստոսի նման աշակերտներ, բոլոր ազգերում»: Մենք հավատում ենք, որ դա նշանակում է, որ նոր հավատացյալները պետք է դառնան մեր հաղորդակցության մի մասնիկը, որպես տեղական եկեղեցու անդամ, որտեղ նրանք կստանան ամեն ինչ, որպեսզի ծառայեն Քրիստոսին:

Հավատքի համայնքի գլխավոր նպատակն է, վերջին օրում, ներկայացնել ամեն մարդու կատարյալ, Քրիստոսում (Կող. 1:28):

Տեղական եկեղեցին, հատկապես այն տեղն է, որտեղ տեղի է ունենում հավատացյալի փրկությունը, կատարելագործումը, կրթությունը և ծառայության նշանակումը: Տեղական եկեղեցին՝ Քրիստոսի Մարմինը, ներկայացնում է մեր հավատքը և միսիան:

Եկեղեցին շրջանային մակարդակով

Նազովրեցու Եկեղեցում, որպես միաբանության հիմք է ընդունվում հավատամքները, կառավարման ձևը, որոշումները և ընթացակարգերը, որոնք կարելի է գտնել Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցում:

Որպես միաբանության կենտրոն, համարվում է Հավատքի Դրույթները: Մենք բոլոր տարածաշրջաններում աջակցում ենք եկեղեցուն, որպեսզի

Ուղեցույցը թարգմանվի բոլոր լեզուներով, տարածել և սովորեցնել մեր մարդկանց նրան ինչին մենք հավատում ենք: Դա ոսկե թելի պես միահյուսվում է ամեն ինչին, ինչ կատարում ենք մենք, որպես նազովրեցիներ:

Այդ միաբանության կարևոր արտացոլումն է Գլխավոր Ասամբլեան, որը հանդիսանում է “բարձրագույն օրգան, ուսմունքներ ձևավորող, օրենքներ ընդունող, և իշխանություն շնորհող Նազովրեցու Եկեղեցու ընտրությունների միջոցով» (Ուղեցույց 300):

Այդպիսի միաբանության երկրորդ ցուցիչն է Գլխավոր Խորհուրդը, որը ներկայացնում է ամբողջ եկեղեցին:

Երրորդ ցուցիչն է Գլխավոր սուպերինտենդենտների Խորհուրդը, որոնք կարող են մեկնաբանել *Ուղեցույցը*, հաստատել այդ ուղեցույցի մշակույթային ադապտացիաները և ծառայության համար ձեռնադրել մարդկանց:

Նազովրեցու Եկեղեցու կառավարումը ներկայացուցչական է, այսպիսով, մի կողմից կասեցվում են եպիսկոպոսական կառավարման ծայրահեղ դրսևորումներից, և մյուս կողմից անսահմանափակ կոնգրեգացիականություն:

Եկեղեցիները չունեն պարզապես կապ, նրանք փոխկապակցված են: Այդ կապերը, որոնք միացնում են մեզ, այնքան ուժեղ են, քան պարզապես մեկ պարան, որը կարող է կտրվել մի վայրկյանում:

Իսկ ի՞նչն է հանդիսանում մեր կապերի աղբյուրը: Դա Հիսուս Քրիստոսն է:

ԵԿԵՂԵՑԻՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՈՒՄՆԵՐՈՎ

Նազովրեցու Եկեղեցին, դա մարդկանց և եկեղեցիների փոխկապակցված ցանց է, որոնք հատուկ ուշադրություն են դարձնում սրբության վարդապետության վրա: Դա անկախ եկեղեցիների ոչ միայն ազատ միություն է, և ոչ հարանվանություն, որը հանդիսանում է եկեղեցիների ասոցացիա, և որը կիսում է հավատքի ընդհանուր դրույթներ առանց օրգանական փոխհարաբերությունների:

Այդ եկեղեցում գոյություն ունեն իսկական փոխադարձ կապեր:

Դրա տակ ենթադրում ենք, որ դա փոխադարձ կախվածությամբ միաբանված տեղական եկեղեցիներ են, կազմակերպված շրջանում, որպեսզի կատարեն ընդհանուր միսիան «դաստիարակելու Քրիստոսի նման աշակերտներ բոլոր ազգերում»: Մեր նվիրվածությունը կայանում է նրանում, որպեսզի մեկս մյուսիս լինենք փոխադարձ հաշվետու, հանուն մեր ընդհանուր միսիայի և պահպանենք մեր ընդհանուր հավատամքների մաքրությունը:

Որպես փոխադարձ կապերով եկեղեցի, մենք ունենք.

- Ընդհանուր հավատամքներ:
- Ընդհանուր արժեքներ:
- Ընդհանուր միսիա:

- Ընդհանուր պատասխանատվություններ:

Ընդհանուր պատասխանատվությունները իրենց մեջ ներառում են ֆինանսական համագործակցությունները: Ամեն համայնք կատարում է զոհաբերություն Ավետարանչական ֆոնդին և հավաքում է ուրիշ հատուկ զոհաբերություններ միսիայի համար:

Հենց սկզբից, Նազովրեցիները դաստիարակել են Քրիստոսի նման աշակերտներ բոլոր ազգերում, իրենց համաշխարհային ծառայության շնորհիվ: Աշխարհի այն մասերը, որոնք հասանելի են եղել Քրիստոսի համար, շարունակում են աճել և զարգանալ: Երբ դուք աղոթում եք և առատաձեռնորեն զոհում, դուք միանում եք ուրիշներին, որպեսզի անեք ավելին, քան դուք կարող էիք անել միայնակ: Ամեն զոհաբերություն, որը հավաքված է ձեր տեղական եկեղեցում, հանդիսանում է միսիային ֆինանսավորելու նպատակով:

Նազովրեցու Եկեղեցին կողմնակից է այն սկզբունքին, որ բոլորը զոհաբերելու իրավունք ունեն, բայց պարտադիր չէ զոհաբերությանը տալ միանման գումար: Դա Աստվածաշնչյան գաղափար է, և այն շատ կարևոր է համաշխարհային եկեղեցու համար, չնայած տեղական եկեղեցիների տնտեսական զարգացման:

Համաշխարհային Ավետարանչական ֆոնդը, դա միջոցների տրամադրման հարանվանության ծրագիրն է: Երբեմն դուք կարող եք լսել «միսիայի ֆինանսավորում» բառերը: Դա ավելի լայն տերմին է քան Համաշխարհային Ավետարանչական ֆոնդը : Այն օգտագործվում է նրա համար, որպեսզի ցուցադրվի, որ աշխարհի տարբեր ծայրերում, միսիան ֆինանսավորվում է տարբեր ճանապարհներով:

Համաշխարհային Միսիային պատկանող տարածաշրջանների միջոցով, եկեղեցու միսիային և միսիոներների աջակցությունը տեղի է ունենում մշտապես: Միսիայի ֆինանսավորումը շատ կարևոր է, որովհետև դա անձնազոհ ծառայություն է ի շահ շատերի:

Եթե նայենք այդ գումարին, որը հավաքվում է ամբողջ աշխարհում, ապա կտեսնեք, որ գումարի միջինը 86.1 տոկոսը ծախսվում է ձեր տեղական եկեղեցիների վրա: 4.5 տոկոսը օգտագործվում է շրջանի ծառայության համար: Նազովրեցու քոլեջները աճեցնում և սովորեցնում են ուսանողներին, օգտագործելով այդ ֆոնդի միայն 1.8 տոկոսը: Մնացած փողերի 7.6 տոկոսը, որոնք ձեր եկեղեցիներից փոխանցվում են

Համաշխարհային Ավետարանական ֆոնդ, միսիոներների, համաշխարհային և հատուկ ծառայությունների համար, որոնց համար հավաքվում են զոհաբերությունները:

Ինչպես տեսնում եք, ձեր զոհաբերությունները հնարավորություն են տալիս սովորեցնելու և հաստատելու աշակերտներին, հասցնել ավետարանը երեխաներին, երիտասարդներին և տարեցներին: Երբ դուք զոհաբերում եք, ապա դուք միանում եք ուրիշ նազովրեցիների հետ, փոխկապակցումներով եկեղեցուն, այսպիսով դուք ցուցաբերում եք սեր դեպի տառապող մարդկանց, ամբողջ աշխարհով մեկ գտնում եք կորած հոգիներին, դաստիարակում եք Քրիստոսի նման աշակերտներ բոլոր ազգերում:

Ավետարանչական համաշխարհային ֆոնդը, հատուկ միսիաները և միսիայի ֆինանսավորումը, բոլորը այս ընդհանուր պատասխանատվության մեկ մաս են կազմում, և դա հնարավոր է անում, որ եկեղեցին ուղարկի միսիոներներ, պատրաստի ազգային առաջնորդներ, ավետարանչության և ուսուցման համար տրամադրի ուսուցիչներ, և նրա համար, որպեսզի կրթի նազովրեցիների նոր սերունդ:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ: ՍՐԲՈՒԹՅՈՒՆ: ՄԻՍԻԱ:

Մենք տեսնում ենք առաջին գլխավոր սուպերինտենդենտ Ֆ.Բրիզիի տեսիլքը արդեն կատարված: Նա ամենասկզբից ասում էր Նազովրեցու Եկեղեցու «աստվածային համայնապատկերի» մասին, որը ընդգրկում է աշխարհը «Տիրոջ համար փրկությամբ և սրբությամբ»:

Ամեն նազովրեցի, որտեղ էլ որ նրանք եղել են, մասնակցում են այդ տեսիլքի լայնատարած իրականացմանը:

Ամեն փոխակերպված կյանք, դա վկայություն է վեսլիական սրբության վարդապետության և բոլորի համար լիակատար փրկության մասին:

Եկեղեցու միսիան. «դաստիարակելու Քրիստոսի նման աշակերտներ բոլոր ազգերում» հիշեցնում է մեզ, որ մեզ տրված են հոգևոր ուժեր, բայց միևնույն ժամանակ, մենք պետք է լինենք բոլոր միջոցների լավ տնօրեններ, որոնք տրվել են մեզ Տիրոջից:

Միսիան բխում է Աստծուց, որը նշանակում է, որ մեր նպատակը ամենաբարձր նպատակն է, որը հնարավոր կատարել մեր մեջ բնակվող Սուրբ Հոգու միջոցով:

Այն ժամանակ, երբ մենք տալիս ենք փառք ու պատիվ մեր «հոգևոր ժառանգությանը», եկեղեցին չի կարող վերադառնալ անցյալ, և չի կարող մնալ նույն տեղը, այնտեղ, որտեղ է նա հիմա: Որպես Քրիստոսի հետևորդներ, մենք շարունակում ենք քայլել դեպի այն քաղաքը, «որի ճարտարապետն ու շինարարը Տերն է» (Եբր. 11:10):

Տեսե՛ք, Աստված ամեն բան նոր է անում: